

**KOMITAS.CA**  
 COMPLEXE FUNÉRAIRE  
 (514) 331-0400

PRE-ARRANGEMENT 0% INTEREST  
 1, 3, 5, 10 YEAR PAYMENT COVERED BY  
 "ASSURIS" ASSURANT LIFE OF CANADA

## ՀՅԴ Գանատայի 46-րդ Ծրջանային ժողովի յայտարարություն

Յուլիս 14-16 շաբաթավերջին, Մոնթրեալի մէջ կայացաւ ՀՅԴ Գանատայի 46-րդ Շրջանային ժողովը, մասնակցութեամբ Թորոնթոյի, Վանկուվըրի, Լաւալի, Ս. Գաթրինգի Մոնթրեալի, Գէմպրիճի, եւ Համիլթընի կոմիտէութեանց պատգամաւորներուն, ինչպէս նաեւ ՀՅԴ «Արմէն Գարօ» ուսանողական եւ ՀՅԴ Գանատայի երիտասարդական միութեանց պատգամաւորներուն: Ժողովին ներկայ էին նաեւ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչը, ՀՅԴ Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ ՀՅԴ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կեդրոնական կոմիտէներու ներկայացուցիչները, ինչպէս նաեւ ՀՅԴ ուղեկից կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ հրաւիրեալներ:



Յուրեայ նիստերու ընթացքին, քննարկուեցան Հայ Դատի, կազմակերպական, քարոզչական, եւ ներգաղութային հարցեր եւ անոնց լուծման ի խնդիր տրուեցան համապատասխան որոշումներ:

Շրջանային ժողովը, վերաբեւերելով յետ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի ծիրէն ներս գանատական քաղաքական դաշտին վրայ ձեռքբերուած իրազդրածումները, վերահաստատեց հայ ժողովուրդի պահանջատիրութեան դատին ի խնդիր հայրենատիրութեան երթը անվիկանդ շարունակելու յանձնառութիւնը:

Ժողովը քննարկման բովէ անցուց նաեւ շրջանի կուսակցական ուսանողական կառոյցի գործունէութեան յաւելեալ թափ ներարկելու հեռանկարները:

Ժողովը որոշեց նաեւ սատար հանդիսանալ հայութեան եռարեւելեալ քաղաքիչներուն՝ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի գործակցութեան ամրապնդման աշխատանքներուն, ինչպէս նաեւ հետամուտ ըլլալ Զաւախքի հայութեան բարօրութեան:

Ժողովը ողջունեց եւ շնորհաւորեց Գանատայի պետութեան հիմնադրութեան 150-ամեակը եւ վերահաստատեց հայ համայնքի քաղաքացիական պարտաւորութիւնները Գանատայի պետութեան յարատեւման եւ զարգացման ի սպաս դնելու պատրաստակամութիւնը:

Շրջանային ժողովը վերահաստատեց ՀՅԴ Գանատայի կառոյցի յանձնառութիւնները հայրենի գոյգ հանրապետութեանց հզօրացման եւ հայութեան պատմական իրաւունքներու վերականգնման գծով:

Ժողովի աւարտին ընտրուեցաւ նոր Կեդրոնական կոմիտէ:  
 ՀՅԴ Գանատայի 46-րդ Ծրջանային ժողով

**Թորոնթոյի ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանին տնօրէն նշանակուած է Ռաֆֆի Սարգիսեանը**



Կարդալ էջ 10

**Հարցազրոյց Թուրքիոյ խորհրդարանի հայ անդամ Սելինա Տողանի հետ**



Կարդալ էջ 8

## Ընկերվար Միջազգայնականի Խորհուրդի ժողովին ՀՅԴ-ն կասեցուց ատրպէյնական հակահայ քարոզչութիւնը



Կարդալ էջ 5

## ՀՕՄ-ի 93-րդ եւ Գանատայի շրջանի 23-րդ Պատգամաւորական ժողով



Կարդալ էջ 6

Լուսանկարը Արմէն Ալեմեանի

**2017**  
**CR-V**  
 STARTING FROM  
**\$26,890\***


Image for illustration purposes only.

**HONDA**  
**GABRIEL**

7000, boulevard Henri-Bourassa E.  
 Montréal-Nord, QC H1G 6C4  
**514 327-7777**  
 www.hondagabriel.com  
 < OPEN SATURDAYS >

**Kevork Asadourian**  
**Vahan Vartanian**  
**Haig Khobasarian**

\*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.



 **ARZ**  
fine foods  
the essence of mediterranean gourmet  
*Authentic Food Experience*

## ARZ Fine Foods

You Can Find ARZ Products  
At Selected, Loblaws,  
Superstore, Fortinos,  
Wholesale Club, & Nofrills  
Stores

- Visit [arzfinefoods.com](http://arzfinefoods.com) for the latest promotions.
- You can also find us on Flipp
- For employment opportunities; Email your resume to [humanresources@arzfinefoods.com](mailto:humanresources@arzfinefoods.com)

# Ascenseur **Adams** Elevator

Services Inc.

PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4

**RBQ# 1812-6474-22**

**www.adamselevator.ca**

**TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613**

**RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,  
INSTALLATION OF ELEVATORS.**

**Eddie, Pedro, Joyce Oughourlian**

## ARMENIAN HERITAGE CRUISE®

**JANUARY 20-28, 2018 - 8 NIGHT CRUISE!**

• St. Kitts • Antigua • Puerto Rico • Labadee

You must book with TravelGroup in order to attend our private Armenian parties!



INSIDE CABIN	\$1044
PROMENADE INSIDE	\$1094
OCEAN VIEW	\$1234
DELUXE BALCONY	\$1524
SUPERIOR BALCONY	\$1574
SUITES available upon request	
3rd or 4th adult or child over 11 years old sharing same cabin \$730	
Children 11 years old and younger \$430	

ALL RATES\* are per person, double occupancy  
 \*Government tax of \$108.36 per person is additional. Prices include all port charges and ACAA Registration fee. Deposit of \$250 per person due upon booking. Cruise is fully refundable until June 1, 2017. Rates and information subject to change at any time without notice.



For Reservations Contact:  
 Local 561-447-0750 • Toll Free 1-866-447-0750 Ext 108 or 102  
 125 SE Mizner Blvd., Suite 14, Boca Raton, FL 33432  
 AHC@travelgroupint.com  
 Call Arpi Ashkarian (Canada) (519) 748-2672

### ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՊԱՅԵԱՆ ՄԱՆԿԱՊՈՐՏԷԶ ԳՈՂՈՒԵԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ ԼԱՓՈՅԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ



### ARMENIAN RELIEF SOCIETY BABAYAN KINDERGARTEN KOLOLIAN ELEMENTARY LAPOYAN HIGH SCHOOL

#### A.R.S. Armenian Private School welcomes applications for the Vice Principal position.

A.R.S. Armenian Private School is the largest co-educational, Armenian-Canadian trilingual and bicultural day school in Ontario, teaching to students from nursery through to Grade 12. The Armenian language, cultural and religious studies are weaved into the general curriculum in adherence with the Ontario Ministry of Education guidelines.

#### Duties and Responsibilities:

- Assist in creating and distributing course timetables and examination schedules
- Responsible for teacher absences and coverage of classes
- Responsible for student discipline, conduct and safety
- Assisting the Principal with staff performance evaluation
- Ensuring the Ontario Curriculum is adhered to by all teachers
- Providing input and assistance with professional development initiatives
- Conducting and participating in staff meetings
- Build relationships to foster a strong co-curricular program
- Work collaboratively with administrators and teaching staff

#### QUALIFICATIONS:

- Graduate degree (Master of Education degree preferred)
- Knowledge of Ontario's Ministry of Education requirements
- 5- 10 years experience in management of an educational environment
- Excellent interpersonal, organizational and communication skills
- Excellent leadership skills with the ability to build and develop effective relationships with employees, parents, and students
- Classroom teaching experience
- Proven experience and involvement in student life initiatives
- A strong commitment to continuous professional development

Please submit your resume and cover letter to [jobs@arsdayschool.ca](mailto:jobs@arsdayschool.ca) by July 31, 2017

#### Հ.Օ.Մ.-ի Ամէնօրեայ վարժարանը կ'ընդունի փոխ տնօրէնութեան պաշտօնի դիմումագրեր:

#### Փոխ տնօրէնին պարտականութիւնները.

- Կը հսկէ եւ կ'օժանդակէ ուսուցիչներուն առօրեայ աշխատանքներուն (գործադրել կարգապահական օրէնքները եւ կանոնները, ճշդել ներկայ-բացակայութիւնը, արտադասարանային աշխատանքները) եւ կը թելադրէ անհրաժեշտ բարելաւումներ:
- Կը պատրաստէ եւ կը գործադրէ ուսուցիչներու դադարի եւ ճաշապահերուն հսկողութեան ժամանակացոյցը:
- Գործակցաբար տնօրէնին կը կազմակերպէ եւ կը վարէ ուսուցիչներու հետ պարբերական ժողովներ՝ ճշդելու եւ լուծելու կարգապահական հարցեր՝ անհատական փոխ-յարաբերութիւններ եւ այլ աշակերտական հարցեր:
- Կը կազմակերպէ եւ կը հսկէ արտադասարանային աշխատանքներուն կամ մասնատր ձեռնարկներուն, որոնք ծրագրուած կամ արտօնուած են տնօրէնին կողմէ, աշխատակցութեամբ ուսուցիչներուն եւ այլ մասնագէտներուն:
- Փոխ տնօրէնը կը ստուգէ աշակերտներուն եւ անձնակազմին բացակայութեան պատճառները եւ կը ճշդէ անհրաժեշտ լուծումներ:

#### Թեկնածուն պէտք է՝

- Ունենայ նուազագոյնը՝ մագիստրոսի վկայական (կրթութեան ծիրէն ներս նախընտրելի)
- Լատատեղեակ ըլլայ Օնթարիո նահանգի Կրթութեան նախարարութեան ծրագիրներուն
- Ունենայ 5-10 տարուան դեկավարութեան փորձառութիւն վարժարանէ մը ներս
- Ունենայ ուսուցչութեան փորձառութիւն

Հաճեցէք ձեր ինքնակենսագրականները (Resume) ուղարկել [jobs@arsdayschool.ca](mailto:jobs@arsdayschool.ca) հասցէին մինչեւ 31 Յուլիս 2017:

# Հայաստանի Կեդր. Դրամատունը Լուր Զուգի, Որ Գալ Տարի Հարիւրամեակ է

Քանի մը օր առաջ, 11 Յուլիսին, Հայաստանի Կեդրոնական դրամատունը յայտարարեց, թէ որոշած է յառաջիկայ տարի հրատարակել նոր թղթադրամներ, որովհետեւ «ՀՀ գալիք տարի նշելու է դրամաշրջանառութեան՝ ՀՀ ԴՐԱՄի ներդրման 25ամեակը, որի ընթացքում ձեւաւորուել են աւանդոյթներ, որոնք օրինակելի եւ ուսուցանելի են դարձել նաեւ միջազգային մակարդակում»:

Կեդր. դրամատունը կ'աւելցնէ, որ ներկայիս գոաձաճուող շրջ սերունդի թղթադրամները «աստիճանաբար իրենց տեղը կը գրիչեն նոր թղթադրամներին՝ սահուն կերպով դուրս բերուելով շրջանառութիւնից»:

Առ այս, Կեդր. դրամատունը որոշած է հրատարակել հետեւեալ նոր դրամանիշերը. 1000 դրամ՝ Պարոյր Սեւակի, 5000 դրամ՝ Ուիլիամ Սարոյանի, 10,000 դրամ՝ Կոմիտասի, 20,000 դրամ՝ Ալվազովսկիի եւ 50,000 դրամ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի պատկերներով: Իսկ Հինգշաբթի օր ալ (Յուլիս 13), Կեդր. դրամատունը մրցոյթ յայտարարեց նոր հրատարակուելիք թղթադրամներու գեղագիտական ձեւաւորման կապակցութեամբ:

(բնականաբար Յակոբ Մարթայեանի նկարը պիտի չգնչի), հնդկական ուուփիին վրայ Մահաթմա Կանտին է, իսկ ամերիկեաններուն վրայ՝ նախագահներու եւ անկախութեան սերունդի դէմքերու նկարներն եւ այսպէս շարունակաբար:

Նոր դրամանիշերու հրատարակման իմաստով ալ՝ Հայաստանը բացառութիւն չէ... սկզբունքով:

Բայց երեւի... բացառութիւն է:

Տեսէք թէ ինչ տեղի կ'ունենայ: Հայաստանի մէջ պետական մակարդակով որոշում կայ յաջողակաւ տարուան Մայիսին նշելու Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան 100ամեակը եւ այս կապակցութեամբ ստեղծուած է յատուկ յանձնաժողով (որուն բաղկացուցիչ կազմին նկատմամբ այս յօդուածագիրը եւ իրեն գաղափարակիցները լուրջ վերապահութիւններ ունին), որուն պարտականութիւնն է պետական մակարդակով նախաձեռնութիւններ առնել ու կազմակերպել:

Հետեւաբար, կ'ակնկալուի, որ պետական ներքին տրամաբանութիւն մը գործէ այս ծիրէն ներս:

Բայց տրուած ըլլալով, որ Հայաստան «բացառութիւն է» (ինչպէս վերը ըսինք), Կեդրոնական դրամատան համար յառաջիկայ տարին կը յատկանշուի... Հայկական դրամանիշի՝ ԴՐԱՄի որդեգրումի 25ամեակով եւ վերջակէտ: Կեդրոնական դրամատան մարզոց ու Յրդ սերունդի դրամանիշերու հարցով կազմուած յատուկ յանձնախումբին համար գոյութիւն չունի հայկական պետականութեան ստեղծումի 100-ամեակ, որուն համար արժէք Յրդ սերունդի թղթադրամները զարդարել նոյն այդ պետականութիւնը կերտած անձերու դիմանկարներով. այսինքն, մասնաշատուկ կերպով՝ Արամ Մանուկեան ու անձեւ քառսէն պետութիւն ստեղծած չորս վարչապետները, Դրոն, զօր. Սիլիկեանն ու Թովմաս Նազարբէկեանը:

Մեր բոլորին անվերապահ յար-

գանքին արժանի դէմքեր են Պարոյր Սեւակը եւ Կոմիտասը: Յարգանքի պակաս իբրեւ թող չմեկնաբանուի, բայց ծուռ նստինք շիտակ խօսինք, Ալվազովսկին, Տիգրան Պետրոսեանը եւ Ուիլիամ Սարոյանը այդքան անկիւնադարձային դէմքեր են, որոնց նկարները արժէ երկրի մը դրամանիշին վրայ գետեղելը: Հապա՞ Գրիգոր Լուսաւորիչը: Եթէ խնդիրը հասաւ վերջինին, հոն եւս սայթաքում կայ, որովհետեւ Հայոց քրիստոնէացման, կամ քրիստոնէութիւնը իբրեւ պետական կրօն պարտադրելու հարցին մէջ, Գր. Լուսաւորիչը պարզապէս գործիք մըն էր. հոն կար քաղաքական որոշում եւ քաղաքական կամք, որուն հեղինակը միայն ու միայն Տրդատ Բ. Թագաւորն էր:

Այս յօդուածագիրին տրամաբանութիւնը այն չէ, որ «անգլիացիները Պոպի Չարլթընին նկարը չեն դրած, մենք ինչո՞ւ Տիգրան Պետրոսեանինը դնենք», կամ Սուրբան Ապուլ՝ Ալա ալ Մարրիին նկարը չէ դրած, մենք Պարոյր Սեւակինը ինչո՞ւ դնենք»: Մեզի չի խառնուիր այս կամ այն պետութեան առած քայլը այս ծիրէն ներս: Ինչպէս ըսինք, իւրաքանչիւր պետութիւն իր թղթադրամները կը գարդարէ նկարներով այն դէմքերուն, որոնք այդ ժողովուրդին արժէքային համակարգին, պատմական անկիւնադարձային դէպքերուն կամ դէմքերուն սերտօրէն կ'առնչուին:

Մեր արծարծած խնդիրը այն է, որ երբ յառաջիկայ տարին 100-ամեակն է Մայիս 28ին հռչակուած Հայաստանի անկախ պետականութեան եւ պետականութեանը կը պատրաստուինք նշելու այդ յորելեանը, Կեդր. դրամատան ղեկավարութիւնը թերթ չի՞ կարդար, լուր չունի՞ նման իրադարձութեան մը. ո՞ր մոլորակին վրայ կ'ապրին արդեօք Կեդր. դրամատան կառավարիչ պաշտօնատարները: Իրենց համար 2018ին կայ ու չկայ ԴՐԱՄի շրջանառութեան 25ամեակն է միակ յիշատակութեան արժանին: Եթէ այդպէս է, ուրեմն Կեդր. դրամատան ղեկավար-

ութիւնը կատարելապէս զուրկ է պետական ու ազգային վարքագիծի որեւէ նշոյլէ. բան մը, որ ինքնին ախտավարակ հոգեբանութեան ու մտածելակերպի հետեւանք է:

Պետականագուրկ ժողովուրդ մը պետականութիւն ունեցաւ 28 Մայիս 1918-ին: Գտնուեցաւ կազմակերպութիւն մը, որ իր քաղաքական կամքով ու գաղափարական սկզբունքներով, յաջողեցաւ այդ օրերուն աներեւակայելի անկիւնադարձ մը ստեղծել մեր ժողովուրդի նորագոյն պատմութեան մէջ: Այս կազմակերպութիւնը (Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը) մեր ժողովուրդին սուաւ այն ղեկավար դէմքերը (ոմանք դաշնակցական, ուրիշներ՝ ոչ), որոնք ցուցաբերեցին համապատասխան կամք, թէ՛ գինուորական եւ թէ՛ քաղաքական իմաստով: Նոյն այդ դէմքերը ունին անուն: Կրկնութեան գնով դարձեալ թուենք ոմանց անունները՝ Արամ Մանուկեան, զօր. Մովսէս Սիլիկեան, զօր. Դանիէլ Բէկ Փիլոսոփան, Դրօ, չորս վարչապետները՝ Յովհաննէս Քաջազնունի, Ալեքսանդր Խատիսեան, Համօ Օհանջանեան, Սիմոն Վրացեան եւ ուրիշներ:

Հետեւաբար, համահունչ ըլլալու համար 100ամեակի առիթով դրսևորուած Հայաստանի Հանրապետութեան պետական ներքին տրամաբանութեան եւ որոշումին, ՀՀ Կեդր. դրամատունը պարտաւոր է վերատեսութեան ենթարկելու նոր թղթադրամներուն կապակցութեամբ իր քանի մը օր առաջուան որոշումը, եւ կայացնէ նոր որոշում՝ Յրդ սերունդի թղթադրամները զարդարելու պետականութիւն կերտած սերունդի վերոնշեալ ներկայացուցիչներու նկարներով:

Հայաստանի Հանրապետութեան նախագահը, վարչապետը եւ Ազգային ժողովը պարտաւոր են իրենց խօսքը ունենալու Կեդր. դրամատան այս իրապէս խոստ եւ իրապէս անկապ որոշումին կապակցութեամբ: Սթափեցէ՛ք պարտնայք:

ՎԱԶԷ ԲՐՈՒՏԵԱՆ

**Ghadir Meat & Restaurant**  
T. 416-750-7404  
1848 Lawrence Avenue E  
Scarborough, ON M1R 2Y4  
E-mail: info@ghadirmeatmarket.com

**Gary Chahinian**  
ABR., Broker of Record - Owner  
RE/MAX DIAMOND Realty Inc.  
W torontohomes.ca  
E gary@remaxdiamond.com  
416-258-8892

**Noor Fine Food**  
Gourmet Mediterranean Cuisine  
1 High Meadow Place, Unit 9  
Toronto, Ontario M9L 2Z5  
Tel 416 745 3111  
Fax 416 745 9337

**ANI Ristorante**  
905.761.6484  
1450 Clark Ave. West,  
Thornhill ON L4J 7R5

**Sutton**  
Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage  
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0  
**Annie Varbedian**  
Sales Representative  
Direct: (416) 918-3615  
Office: (416) 739-7200  
Fax: (416) 739-9367  
annievarbed@hotm.com  
www.suttongroupadmiral.com

**hearing aid source**  
Andre Ayvazyan HIS B.A.S.  
andre@HearingAidSource.ca  
416 754 4327 (HEAR)  
Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

**Crown Pastries**  
Fine Middle Eastern Pastries  
2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)  
Toronto ON, M1R 2Z5  
Tel 647.351.2015  
www.crownpastriesbaklava.com

**I.D.A.**  
Part of the **Bozell** family of pharmacies.  
Pharmacists  
**Sarkis Balian**  
**Vartan Balian**  
**Maral Abdalian Balian**  
**Cassandra Pharmacy Inc.**  
2040 Victoria Park Ave.  
Toronto, Ontario  
M1R 1V2  
Tel. : 416.449.2040  
Fax: 416.449.2048

**ANI BAKERY**  
ԱՆԻ ՓՈՒԱՊԱՆ  
**Middle Eastern Pizza Lahmajoun**  
ARSEN DABBAGHIAN  
25 Howden Road, Unit #2  
Scarborough, Ontario M1R 3C8  
Tel: 416.285.7164

# Ընկերվար Միջազգայնականի Խորհուրդի Ժողովին ՀՅԴ-ն Կասեցուց Ատրպեյճանական Հակահայ Քարոզչությունը



11 եւ 12 յուլիսին Նիւ Եորքի մէջ տեղի ունեցաւ Ընկերվար միջազգայնականի խորհուրդի ժողովը, որուն առաջին նիստին հիւրաբար խօսք առաւ Միացեալ ազգերու կազմակերպութեան (ՄԱԿ) ընդհանուր քարտուղար Անթոնիօ Կուլթերես: ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարը իր ուղերձին մէջ յատկապէս անդրադարձաւ զինեալ բախումներու պատճառով ստեղծուած տեղահանուածներու համատարած տաղնապին, աշխարհը պատուհասող միջազգային ահաբեկչութեան եւ կենսոլորտի փոփոխութեան ճգնաժամին եւ երիտասարդութեան դիմադրուած մարտահրաւէրներուն, մանաւանդ շեշտելով համատարած անգործութեան լուծումներ գտնելու հրամայականը: Ան շեշտեց նաեւ, որ զինեալ առճակատումներու կանխարգելման ուղղութեամբ աւելի գործնական լուծումներ պէտք է որդեգրէ միջազգային ընտանիքը:

ՄԱԿ-ի մէջ այս ժողովին իր մասնակցութիւնը բերաւ Ընկերվար միջազգայնականի լիբրալ անդամ Հայ յեղափոխական դաշնակցութիւնը: Հայաստանը ներկայացնող ՀՅ Դաշնակցութեան պատուիրակութիւնը կը գլխավորէր ՀՅԴ Բիւրոյի անդամ եւ Հայ դատի Կեդրոնական խորհուրդի նախագահ Յակոբ Տէր Խաչատուրեան, իսկ այդ պատուիրակութեան անդամներն էին՝ Վահագն Գարագաշեան (Գանատա), Սանտրա Վարդանեան (Միացեալ Նահանգներ), Մարալ Չորոյեան (Միացեալ Նահանգներ), Սեւակ Պելեան (Գանատա), Յակոբ Յակոբեան (Գանատա), Նարէ Բիւփէլեան (Միացեալ Նահանգներ):

Նշենք նաեւ, որ ՀՅԴ-ի անդամ Մարիօ Նալպանտեան Ընկերվար միջազգայնականի փոխնախագահ է, իսկ Արմէն Թուստամեան տարածաշրջանի յանձնախումբի նախագահ է:

Ընկերվար միջազգայնականի նախագահ Ճորճ Փափանտրէու եւ ընդհանուր քարտուղար Լուիս Այալա ներկայացուցին այս ժողովի հետեւեալ երեք գլխաւոր նիւթերը՝

1) Ամբողջիկ բազմակողմ համա-

գործակցութիւնը խաղաղութեան համար: 2) Վերահաստատել մեր արժէքներն ու քաղաքականութիւնը անհրաժեշտ փոփոխութիւններու լոյսին տակ:

3) Պաշտպանել ժողովրդավարութիւնը, ուր որ ժխտուած է կամ կը գտնուի սպառնալիքի տակ:

Ընկերվար միջազգայնականի ընդհանուր քարտուղար Լուիս Այալա յատուկ կերպով անդրադարձաւ Թուրքիոյ ներքաղաքական կացութեան եւ անոր իշխանութիւններուն ի գործ դրած բռնաճնշումներուն: Խօսք առաւ Թուրքիոյ Հանրապետական ժողովուրդի կուսակցութեան ներկայացուցիչ Ումութ Օրան, որ յայտնեց, թէ ներկայ դրութեամբ Անգարայի իշխանութեանց հաւածանքներուն իբրեւ հետեւանք Թուրքիոյ մէջ բանտարկուած է 50 հազար քաղաքացի, 164 լրագրող, 200 լրատուամիջոց եւ 12 խորհրդարանի անդամ: Ան հաստատեց նաեւ, որ Թուրքիոյ մէջ այսօր ոտնակոխուած են մարդ անհատի իրաւունքները, խօսքի ազատութիւնն ու ժողովրդավարութիւնը: Ան շնորհակալութիւն յայտնեց Ընկերվար միջազգայնականի մեծ ընտանիքին ցուցաբերած զօրակցութեան համար:

Ատրպեյճանի Ընկերվար ժողովրդավարական կուսակցութեան ներկայացուցիչ Արազ Ալիգատէ խօսք առնելով յայտարարեց, որ Ղարաբաղի հայերը ռուսներուն անմիջական օժանդակութեամբ գրաւած են Ատրպեյճանի 20%-ը: Հայաստանի Հանրապետութեան ներկայ ու նախկին նախագահները որակեց իբրեւ Ղարաբաղի մաֆիա եւ նշեց, որ 2016-ի ապրիլին հայկական կողմի յարձակումը սանձելու նպատակով միայն Պաքուն զինուորական գործողութեամբ հակադրուեց: Ըստ Ալիգատէի, անցնող քառասուն օրերուն հայերը 30 երեսներ սպաննած են: Ալիգատէ նաեւ կոչ ուղղեց վերջ տալու ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի միջնորդական առաքելութեան եւ Ղարաբաղի հարցը յանձնելու ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդին:

Ընկերվար միջազգայնականի

ընդհանուր քարտուղար Լուիս Այալա խօսքը փոխանցեց ՀՅԴ պատուիրակութեան ղեկավար Յակոբ Տէր Խաչատուրեանին, որ նախ եւ առջ ցաւ յայտնեց ազրպեյճանցի ներկայացուցիչի ապատեղեկատուական, անարգալից ու զգացական գեղումներով կատարած անընդունելի ելոյթին համար: Ան յայտնեց, որ 2016-ի ապրիլեան ազրպեյճանական դրոշմ մեծ խախտում էր 1994-ի Ատրպեյճանի իսկ ստորագրութիւնը կրող հրադադարին եւ կը միտէր բռնկեցնել Արցախի ու Հայաստանի սահմանները՝ նոր պատերազմի մը սկիզբ տալով. ատրպեյճանական նախադրուածի բանակը ո՛չ միայն խախտեց պատերազմական միջազգային օրէնքը, այլ նաեւ խողովուրդի ենթակից սահմանամերձ խաղաղ հայ բնակիչներ, որոնց մէջ տարեցներ եւ երեխաներ. այս խժժութիւնները կը վերլիցնէին Սուււալիթի, Պաքուի եւ Կիրովպատի մէջ հայերուն դէմ գործադրուած սպանդները, որոնց միջոցով Պաքուն բնաջնջեց Ատրպեյճանի մէջ բնակող հայութեան կարեւոր տոկոսը ու մնացեալն ալ քարտեց իր երկրէն դուրս: Ան շեշտեց, որ Ղարաբաղը երբեք մաս չէ կազմած անկախ Ատրպեյճանին, այլ խորհրդային իշխանութիւններու կամայական որոշումով գետեղուած էր Խորհրդային Ատրպեյճանի հովանիին տակ ստալինեան օրերուն:

Յակոբ Տէր Խաչատուրեան նաեւ յայտնեց որ հայ ժողովուրդը լաւ գիտէ պատերազմի արհաւիրքը, որովհետեւ անցեալ դարուն ունեցած է դառն փորձառութիւնը Յեղասպանութեան, որ ծրագրուած ու գործադրուած էր Թուրք պետութեան կողմէ իր իսկ քաղաքացիներուն նկատմամբ 1915-1923-ի ընթացքին: Ուստի, բնական է, որ Ղարաբաղի հայութիւնը, որ ճաշակած էր ազրպեյճանական հալածանք ու սպանդ եւ տեսած թէ Ատրպեյճանի պետական բարձրագոյն ներկայացուցիչներն անգամ կը հերոսացնեն հայասպան ոճրագործներ, բացառէր Ատրպեյճանի որեւէ ենթակայութիւն: Ղարաբաղի ժողովուր-

դին համար երբեք ընդունելի չէ ազատ ինքնորոշման իր միջազգայնօրէն ամբողջութեամբ իրաւունքի ոտնակոխումը:

Յակոբ Տէր Խաչատուրեան կոչ ուղղեց Ատրպեյճանի Ընկերվար ժողովրդավարական կուսակցութեան պատուիրակութեան, ապատեղեկատուութիւն եւ ատելութիւն սերմանելու փոխարէն իր պետութիւնը մղելու, որ Ղարաբաղի հարցը Մինսքի խմբակի միջոցով ու քաղաքակիրթ երկխօսութեան ճամբով լուծելու հետամուտ ըլլայ: Ան շեշտեց, որ պատերազմը պէտք է բացառուի ու Արցախի հիմնախնդիրը հանգուցալուծման համար իրագործուին հետեւեալ կէտերը.

Ա. 1994-ի զինադադարի ամրագրում եւ Վիէնայի ու Ս. Փեթերսպուրկի հանաձայնութեանց յարգում:

Բ. Ատրպեյճանի հրադադարի խախտումներու կասեցում եւ շփման գիծի երկարութեան հետախուզական սարքերու գետեղում, որպէսզի անառարկելիօրէն ճշգրտին խախտումներու աղբիւրն ու նախաձեռնող կողմը:

Գ. Ատրպեյճանական մերժողական քաղաքականութեան դադարեցում, միայն խաղաղ ճանապարհով հարցի լուծման ազրպեյճանական յանձնառութիւն եւ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի հովանաւորութեան ներքոյ բանակցութիւններու լուրջ վերսկսում:

Դ. Ատրպեյճանի զինուած ուժերուն կողմէ իր իսկ քաղաքացիները իբրեւ մարդկային վահան օգտագործելու դատապարտում եւ այդ բարբարոս վերաբերմունքին վերջակէտ դնելու անհրաժեշտութիւն:

Երկօրեայ այս ժողովի ընթացքին ՀՅԴ պատուիրակութիւնը, օրակարգերու քննարկումներու մասնակցութեան առընթեր, հանդիպումներ ունեցաւ Լատին Ամերիկայի, Արեւմտեան Եւրոպայի, Ռուսիոյ, Պիեղոուսիոյ, Ղազախստանի, Թուրքիոյ, արաբական աշխարհի, Կիպրոսի, Քոսովոյի, Իսրայէլի, քրտական կազմակերպութիւններու եւ Ընկերվար միջազգայնականի Կանացի կազմակերպութեան պատուիրակութեանց հետ:

**Հորիզոն** | [www.horizonweekly.ca](http://www.horizonweekly.ca)

# ՀՕՄ-ի 93-րդ եւ Գանատայի շրջափ 23-րդ Պատգամաւորական ժողով

ՀՕՄ-ի 93-րդ եւ Գանատայի շրջափի 23-րդ պատգամաւորական ժողովը տեղի ունեցաւ Մոնթրէլի Հայ կեդրոնի «Աւետիս Ահարոնեան» սրահին մէջ, 30 Յունիս, 1 եւ 2 Յուլիս 2017-ին, մասնակցութեամբ 58 պատգամաւորներու:

Ժողովին ներկայ էին ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ ընկճ. Գարոյին Շմաւոնեան, Կեդրոնական վարչութեան Գանատայի շրջափի ներկայացուցիչ ընկճ. Վարսենիկ Սարգսեան եւ ԱՄՆ Արեւելեան շրջափի ներկայացուցիչ ընկճ. Սոնիա Պատիկեան, ինչպէս նաեւ ուղեկից կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Ուրբաթ, 30 Յունիս 2017-ին, կ.ե. ժամը 3-ին, Գանատայի Շրջափի վարչութեան ատենապետ ընկճ. Արմինէ Կարապետեան ժողովը բացաւ ՀՕՄ-ի քայլերգով, որմէ ետք ժողովականները մէկ վայրկեան յոտնկայս լուծեցին յարգանքի տուրքը մատուցեցին Արցախի զոհուած ազատամարտիկներուն եւ ՀՕՄ-ի մահացած անդամներուն:

Ժողովը ընտրեց առժամեայ դիւան. ատենապետ՝ Աննա Պուլկարեան եւ ատենադպիր՝ Մարալ Յովսէփեան, ապա մնալուն դիւան ընտրուեցան երկու ատենապետներ՝ ընկճ. Աննա Պուլկարեան եւ ընկճ. Անի Հոթոյեան Ժոյի, իսկ որպէս ատենադպիրներ՝ Յըրա Կիրակոսեան եւ Անի Պապիկեան:

Ժողովավարական կանոններու մեկնաբան նշանակուեցաւ ընկճ. Մարո Յրունեան:

Իրաւասութիւններ ճշգրտ եռանդամ յանձնախումբը, բաղկացած ընկերուհիներ՝ Սօսի Թաշեանէն, Մարալ Դերձակեանէն եւ Տիգրանուհի Գեորգեանէն:

նէն, զեկուցեց, թէ ժողովին կը մասնակցին ՀՕՄ-ի Գանատայի 10 մասնաճիւղերէն 9-ն, կը բացակայի Սենթ Քաթրինի «Արագ» մասնաճիւղը:

Ժողովի օրակարգին եւ ժամանակացոյցին վաւերացումէն առաջ իւրաքանչիւր պատգամաւոր ինքզինք ներկայացուց, որուն ընթացքին բոլոր պատգամաւորները առիթ ունեցան իրարու ծանօթանալու:

Շրջ. վարչութեան ատենապետ ընկճ. Արմինէ Կարապետեան ներկայացուց Շրջափի վարչութեան հիւրերը՝ ընկերուհիներ Հուրի Նաճարեան, Անի Օհանեան եւ Շաքէ Կէօնեան:

Իսկ ժողովը խորհրդակցական ձայնով որպէս հիւր ընտրեց հետեւեալ ընկերուհիները. Լորա Մովլեան, Շաքէ Ստեփանեան, Երան Պանքեան, Մայտա Գարրիէլեան, Արմինէ Վահրատեան եւ Քրիսթին Աֆարեան:

Յաջորդաբար խօսք առին Կեդրոնական վարչութեան ատենապետ ընկճ. Շմաւոնեան, Կեդրոնական վարչութեան անդամ ընկճ. Սարգսեան եւ ԱՄՆ Արեւելեան Շրջափի վարչութեան ներկայացուցիչ ընկճ. Պատիկեան, որոնք իրենց ուրախութիւնը յայտնեցին ներկայ գտնուելու այս ժողովին եւ յաջողութիւն մաղթեցին: Ընկճ. Շմաւոնեան շնորհակալուեցաւ յայտնեց ՀՕՄ-ի Գանատայի շրջափի՝ իրենց բերած նիւթական աջակցութեան համար, ի մասնաւորի Ստեփանակերտի Մանկապարտէզի շինութեան օժանդակութեան, Արցախի եւ Զաւախքի ծրագրներուն:

Խօսք առին նաեւ ՀՅԴ Կեդրոնական կոմիտէի հերթապահ ընկ. Խորէն Տիմիթեան, Համազգայինի Շրջ. վարչութեան ատենապետ ընկճ. Մովիկ Գահվէճեան, «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագիր Վահագն Գարագաշեան, ՀՄԸՄ-ի Շրջ. վարչութեան ներկայացուցիչ եղբայր Պերճ Աթոյիկեան եւ Գանատայի Ազգ. վարչութեան անդամ ընկճ. Սեդա Մալխասեան: Անոնք բարձր գնահատեցին ՀՕՄ-ի տարած ազգանուէր աշխատանքը եւ իրենց գործակցութիւնը յայտնեցին ապագայ ծրագրերուն համար:

Ընտրողական յանձնախումբը, բաղկացած ընկերուհիներ՝ Արտա Շահինեանէն, Քրիստին Աւետիսեանէն, Լիւսի Շահինեանէն, Անի Գոյուլեանէն եւ Արաքսի Խոզոպեանէն, ներկայացուց յայտնախումբերու թեկնածուներու ցանկը:

Բանաձեւի յանձնախումբը. ընկերուհիներ Տիւրուկ Մանճիկեան, Զեփիւռ Տորոն, եւ Ալին Հատիսեան:

Յարաբերական թուղթեր քննող յանձնախումբը. Նանոր Մալոյեան, Նոյեմի Եղծեան եւ Զարուկ Զատրեան:

Հաշուեքննիչ յանձնախումբը. ընկերուհիներ Սեդա Մալխասեան, Նազելի Սեֆերեան Բլաւուսըն եւ Սեդա Գուշեան: Ժողովը միաձայնութեամբ վաւերացուց ցանկը:

Այս ընտրութիւններուն յաջորդեց ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ ընկճ. Գարոյին Շմաւոնեանի զեկուցը: Ընկերուհի power point-ով ներկայացուց ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան գործունէութիւնը, շրջաններու եւ մեկուսիներու թիւը, ծրագրերու իրագործումը, ՄԱԿ-ի ծիրէն ներս ՀՕՄ-ի մասնակցութիւնը, ՀՕՄ-ի Հիմնադրամի աշխատանքներն ու ապագայի մարտահրաւերները:

Շրջանային վարչութեան ատենապետ ընկճ. Արմինէ Կարապետեան խօսք առնելով ըսաւ, որ Շրջանային վարչութիւնը գնահատագիր պիտի յանձնէ իր յանձնախումբերուն մէջ 10 տարի եւ աւելի աշխատող անդամներուն, նկատի ունենալով որ 2016-ը Մառաշտի վարչութեան տարի հռչակուած էր: Գնահատագիր ստացան հետեւեալ ընկերուհիները. Թորոնթոյէն՝ Լորա Մովլեան, Անժէլ Բանիկեան եւ Սիւզի Գալթիսեան, Մոնթրէլէն՝ Արուս Էրամեան, Նոյեմի Եղծեան եւ Տիւրուկ Մանճիկեան, Լաւալէն՝ Ազգանուշ Հատիսեան:

Ժողովի աւարտին պատգամաւորները ուղղուեցան Ռոբի ճաշարանը, ուր ընկերային ճաճելի ժամանակ անցուցին:

Շաբաթ, 1 Յուլիս 2017-ին Դիւանի ատենապետ ընկճ. Անի Հոթոյեան Ժոյի բացուած յայտարարեց ժողովը եւ թելադրեց Գանատայի քայլերգով սկսիլ, նկատի ունենալով Գանատայի տօնն ու մասնաւորաբար համազանակցութեան 150-ամեակը: Գանատայի քայլերգէն ետք, ընկճ. Աննա Պուլկարեան գլուխը վաստակաշատ ընկճ. փրոֆեսոր Շաքէ Տէր Մելքոնեան Միխասեանի մահը: Ժողովը յոտնկայս յարգեց յիշատակը ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան նախկին ատենապետին եւ պատգամաւորական ժողովներու մակարդակը բարձր պահող յանձնառու անդամին: Պատգամաւորներ, որոնք մօտէն ճանչցած էին ընկճ. Շաքէն, յուզումով խոնարհեցան իր յիշատակին առջեւ:

Ժողովը շարունակուեցաւ նախորդ

օրուան ատենապետութեան ընթացումով, ապա ընկճ. Անի Թաշեան ներկայացուց Շրջանային վարչութեան երկամեայ լայնածաւալ տեղեկագիրը՝ իրագործուած բանաձեւերը, ապագայի ծրագրերը, գրասենեակային աշխատանքի արդիականացումը, յատկացումներն ու նուիրատուութիւնները: Նիւթական տեղեկագիրը ներկայացուց ընկճ. Անի Գրալեան: Եղան հարցումներ, որոնց պատասխանեցին վարչական անդամները: Ընկճ. Թաշեանի եւ ընկճ. Գրալեանի աշխատանքը մեծապէս գնահատուեցաւ յարաբերական թուղթեր քննող յանձնախումբին, հաշուեքննիչ յանձնախումբին եւ ժողովականներուն կողմէ:

Ընկճ. Մարալ Դերձակեան առաջարկեց պատգամաւորական ժողովին անունով շնորհաւորական նամակ մը դրկել վարչապետին եւ կամ հայաշատ շրջաններու երեսփոխաններուն, Գանատայի տօնին եւ համազանակցութեան 150-ամեակին առիթով: Ժողովը վաւերացուց առաջարկը:

Շրջանային վարչութեան գործունէութեան քննարկումին յաջորդեց 2017-2019 տարեշրջանի առաջարկներն ու թելադրանքները:

Բանաձեւի յանձնախումբին զեկուցէն ետք, Մոնթրէլի «Սուէ» մասնաճիւղը ընթերթ հիւրասիրեց պատգամաւորներուն: Կէսօրուան ճաշի հիւարսիրութիւնը տրամադրուած էր Լաւալի «Շուշի» մասնաճիւղին կողմէ:

Կիրակի, 2 Յուլիս 2017-ին ընկճ. Աննա Պուլկարեան աղօթքով բացաւ ժողովը: Ատենապետութեան ընթացումէն եւ վաւերացումէն ետք Բանաձեւի յանձնախումբը ներկայացուց բանաձեւերը, որոնք կարգ մը փոփոխութիւններով վաւերացուցան: Հաշուեքննիչ յանձնախումբը ներկայացուց 2017-2019 տարեշրջանի նախահաշիւը, որ կարգ մը ճշգրտներէ ետք վաւերացուցաւ:

Ընտրողական յանձնախումբը ներկայացուց շրջանաւարտ վարչականներու, վերընտրելիներու եւ նոր թեկնածուներու անունները: Ժողովը միաձայնութեամբ ընտրեց 2017-2019 Գանատայի Շրջանային վարչութեան անդամները. ընկերուհիներ՝ Անի Օհանեան, Անի Գրալեան, Վարդուկ Պէզեան, Նաթալի Մանուկեան եւ Սիւզի Օհանեան: Փոխ անդամներ ընտրուեցան՝ ընկերուհիներ՝ Անի Պապիկեան, Յըրա Կիրակոսեան, Լիւսի Շահինեան, Գեղուհի Պասթաեան եւ Զեփիւռ Տորոն:

Ժողովականները խօսք առնելով գնահատեցին շրջանաւարտ վարչութեան գործունէութիւնը, պատգամաւորական ժողովի դիւանը, ժողովի յանձնախումբերը, հիւրասիրութեան յանձնախումբը, Մոնթրէլի Սուէ եւ Լաւալի Շուշի մասնաճիւղերու վարչութիւնները, ինչպէս նաեւ՝ ճաշարան սպասարկութեան համար: Բայց մեծագոյն շնորհաւորական խօսքը գնաց յանձնառու հայ կնոջ, որ այսքան լայնածաւալ գործունէութիւն կը տանի՝ կրթական օժանդակներու օգնութիւն, հայրենիքի (Հայաստան, Արցախ եւ Զաւախք) օժանդակութիւն, կարօտեալներու խնամք եւ այս բոլորը սիրայօժար եւ կամաւոր ձեւով:

Ենթոյն ժողովը իր աւարտին հասաւ Կիրակի, 2 Յուլիս 2017-ին, կ.ե. ժամը 3:00-ին:



ՀԱՅ ՕՂԲՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՉԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
ARMENIAN RELIEF SOCIETY OF CANADA (A.R.S.) Inc.  
LA CROIX DE SECOURS ARMÉNIENNE DU CANADA (A.R.S.) Inc.

Montreal, July 1<sup>st</sup> 2017-07-03

The Right Honourable Justin Trudeau,  
Prime Minister of Canada,  
Ottawa

Dear Prime Minister,

The Armenian Relief Society (ARS) of Canada is currently holding its 93rd Convention in Montreal from June 30 to July 2, 2017. On behalf of our convention delegates and all of our members across this great country, we would like to congratulate Canada on its 150th Birthday.

ARS, founded in 1910 in New York, is an independent, non-sectarian, philanthropic Women's society serving the humanitarian, social and educational needs of Armenians and non-Armenians alike. ARS is also a member of the United Nations, having been granted Department of Public Information status in 1978 and consultative status in the Roster category with the Economic and Social Council in 1998. ARS has presence in 26 countries with over 14,000 volunteer members worldwide.

As part of its mission, the ARS supports educational and social needs, promotes health and welfare within our communities, fosters active participation in society and actively co-operates with organizations pursuing similar humanitarian aims.

The ARS Canadian Region consists of 10 chapters dispersed throughout various communities across Canada, with a total volunteer force near 1300 members. Our volunteers with their relentless devotion and hard work contribute towards the betterment of their local communities as well as having significant international impact. Recently, our Canadian membership actively participated in humanitarian efforts that brought forth generous funding for schools, hot meal programs for needy families and warm clothing for children devastated by the war in Syria. Our volunteers continue to play an integral and critical role in the support and integration of the many refugees graciously accepted by Canada.

Canada is a unique country where all immigrants are encouraged to intertwine their unique cultural perspectives within its multicultural mosaic thus creating a rich cultural fabric unlike any other. Our members have adopted Canada as their home, often fleeing wars, social injustices and economic insecurity to become proud and productive Canadians.

It would be an honour to welcome you to visit any of our community centres, to share with you our goals and projects, our successes and to encourage dialogue about the needs and strengths within our communities.

We are honoured to be Canadian and  
We join our voices to yours in  
Wishing Canada a Happy 150th Birthday and  
Celebrating with you

We look forward to an opportunity to meet.  
Yours respectfully,

Anna Boulgarian  
Ani Hotoyan-Joly  
Co-Chairs  
ARS Canada Regional Convention

3401, Olivier-Asselin, Montréal (Québec) H4J 1L5 • Tél.: (514) 333-1616 • Télécopieur/Fax : (514) 333-1612  
e-mail: ars-canada@bellnet.ca • www.ars-canada.ca

Այցելեցեք [hitunes.ca](http://hitunes.ca) կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցեք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը

**HITUNES.CA**

Ունկնդրեցեք [triktrak.ca](http://triktrak.ca) կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցեք շահեկան հարցազրոյցներ

**TRIKTRAK.CA**

# Սիրուշոյի պատմական համերգը Մոնթրէալի մէջ



Երեքշաբթի, Յուլիս 4-ին, Մոնթրէալ ժամանեց աշխարհահռչակ հայ երգչուհի Սիրուշոն, ընկերակցութեամբ իր անօրէնուհիին՝ Նունէ Խուրշուտեանի, եւ գեղարուեստական ղեկավարուհիին՝ Քրիստինա Աւագեանի:

Նախքան համերգի թուականը, իրենց կեցութեան երեք օրերուն ընթացքին, արուեստագէտն ու իր անձնակազմը առիթը ունեցան փորձեր կատարելու Համազգայինի «Անի» գոյգ պարախումբերուն եւ «Քնար» երգչախումբին հետ, որոնք արդէն ամիսներէ ի վեր կը պատրաստուէին համերգի մասնակցութեան՝ հիմնուելով Սիրուշոյի տեսաձուլակներուն վրայ եւ հետեւելով իրենց

ղեկավարներու ցուցմունքներուն:

Սիրուշոյի առաջին մենահամերգը Մոնթրէալի մէջ տեղի ունեցաւ Ուրբաթ, Յուլիս 7-ին, երեկոյեան ժամը 8-ին, College Laval-ի Marcelin Champagnat սրահին մէջ: Զեւոնարը կազմակերպուած էր Համազգայինի Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան վարչութեան կողմէ, սակայն կարելի պիտի չըլլար իրագործել գայն առանց «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրութեան եւ յատկապէս՝ խմբագիր ընկեր Վահագն Գարագաշեանի կատարած միջամտութեան եւ ճիգերուն:

Բարի գալուստի խօսքով, ձեռնարկին բացումը կատարեց Համազգայինի

ատենապետուհին, որ իր խօսքին մէջ ըսաւ. «Այսօր, Սիրուշոյի առաջին համերգով, Մոնթրէալի հայ համայնքը պատմական օր մը կ'ապրի, եւ իբր վարչութիւն, ամենէն մեծ գոհունակութիւնն էր տեսնել անցնող երեք օրերու ընթացքին մեր պարախումբերուն եւ երգչախումբին անսահման խանդավառութիւնը, երբ առիթը ունեցան աստղի մը հետ բեմը բաժնեկցելու փորձառութիւնը:

Ամբողջ ելոյթի տեսողութեան, արուեստագէտը հմայեց 760 ներկաները՝ իր ճոխ եւ բծախնդրօրէն մշակուած յայտագրով՝ ազգագրական, աշուղական եւ այժմէական երգացանկով, պարերով ու երգչախումբով:

Բացման պարը կատարեց Համազգայինի «Անի» պարախումբը իր «բոբուրի» պարով: Համազգայինի «Քնար» երգչախումբը ընկերակցեցաւ երգչուհիին «301» երգով, իսկ գոյգ պարախումբերու տղաքը իրենց արդի եւ ավանդական պարերու հմուտ շարժումներով թմբաշարին բեմը՝ զարկ տալով Սիրուշոյի «Pregomesh», «Քելէ-քէլէ», «Հուշա», «Մհեր» եւ «Ձարթօնք» երգերուն: Իսկ աղջիկները իրենց նազ պարերով հարստացուցին բեմը «Կողալ», «Շորորա» եւ «Էրթթաս» երգերուն ընթացքին: «Թամամ աշխարհ» երգին իր յատուկ մասնակցութիւնը բերաւ մոնթրէալաբնակ յայտնի տուտուկահար Վա-

ղարչակ Ադամեանը:

Աւարտին, երկար եւ յոտնկայ ծափող յոյններէն ետք, բեմ բարձրացաւ ատենապետուհին եւ Համազգայինի վարչութեան անունով յատուկ շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք սատարեցին սոյն ձեռնարկը յաջողութեամբ պսակելու գործին, սկսելով Սիրուշոյին, որ յաջողեցաւ մէկ գիշերուան մէջ մեզ փոխադրել Երեւանէն Կարս ու Անի, Սասուն ու Տէր Զօր եւ ամբողջ արեւմտեան հատուած: Շնորհակալութեան շարքը շարունակեց բեմ հրաւիրելով Սիրուշոյին հետ ժամանած անձնակազմը, գոյգ պարախումբերու ղեկավարներ Եւա Հայրապետեան եւ ձօ Աւագեան, «Քնար» երգչախումբի ղեկավար Լուի Անթունեան, եւ տուտուկահար Վաղարշակ Ադամեան: Յատկապէս շնորհակալութեան խօսք ուղղեց պարախումբի յանձնախումբին եւ տոմսերու պատասխանատու Սիրլի Մերձանեանին, եւ վերջապէս ներկաներուն, որոնք հաւատարմօրէն կը քաջալերեն Համազգայինի բոլոր ձեռնարկները՝ բարձր գնահատելով վարչութեան անսակարկ աշխատանքը հայ մշակոյթի պահպանման եւ միութիւնը կանգուն պահելու ի խնդիր:

«Սանահին» մասնաճիւղի վարչութիւն

 Այցելեցէք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կայքէջը՝ [www.sourphagop.org](http://www.sourphagop.org)

  
**HAIG AFARIAN**  
Cell : 514.862-6779  
Bur : 514.360.3000 ext 1234  
haig.afarian@gmail.com  
effectuée par MALES ARCHITECTES-HYPOTHÉCAIRES  
**Charisma FINANCE**  
3310 100e Avenue, bureau 350, Laval  
Québec H7T 0J7 • FAX: 514.313.5718

Groupe Sutton - Performer Inc.  
123 Place Frontenac  
Pointe-Claire, QC H9R 4Z7  
  
**ALBERT ARKILANIAN**  
Courtier immobilier résidentiel  
Residential Real Estate Broker  
aarkilianian@sutton.com  
Cell: 514.962.8822  
Bur: 514.426.9595  
Fax: 514.426.9596

   
VÉHICULES D'OCCASION  
**CERTIFIÉS**  
   
**Kevork Asadourian**  
Directeur des ventes - usagé  
Sales Manager - Pre-Owned  
kasadourian@gabriel.ca  
7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4  
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967  
www.nissangabriel.com • www.hondagabriel.com

 **École De Conduite**  
 Driving School  
**Tel: 514-336-1110**  
Moniteur-Instructeur  
AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM  
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II  
Instruction Automatique ou manuelle

Personal & Corporate Tax Returns  
Financial Statements  
Bookkeeping  
Business Plan  
  
**NATALIE SKAFF, CPA, CGA**  
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant  
nat.skaff@gmail.com  
Tel: (514) 963 3363  
2866 Rue De Chamonix  
Saint-Laurent, Québec  
H4R 3B7  
Services available  
in Armenian, Arabic,  
English and French

BRING YOUR OWN WINE  
  
**NAZARETH**  
CLASSIC GRILL  
550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6  
Tel: 450.937.4064  
Email: resto.nazareth@hotmail.com

**SAMUEL TOPALIAN**  
450 682-1644  
**AUTO SAMSON**  
  
MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE  
SERVICE DE PNEUS MISE AU POINT  
4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.

  
**ՀԱՅԿ ԳԱՐՇՈՒՆԻԱՆ**  
**Hayk Hartounian**  
Courtier immobilier résidentiel  
Residential Real Estate Broker  
**C 514.574.6162**  
**B 514.333.3000**

  
**NETTOYEUR MARIE-CLAIRE**  
**CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE**  
**À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)**  
2535 de Salaberry, Montréal  
Tél: 514.334.7830

# Թուրքիայի հայերի բլան «Բ»ը. գրոյցներ ապագայի մասին՝ Մեծիսի միակ հայազգի կին պատգամաւոր Սելինա Տողանի հետ (Ա. մաս)

Ինքնավստահ ու հանդարտ քայլուածքով, ներքին հանգստութիւն ժայթքող հմայիչ ժպտով, միշտ նորաձեւ ու տեղեկացուած, անմիջական ու օրուգիշեր պրպտող. այսպիսին է այսօր Թուրքիայի Մեծիսում հայ կնոջը ներկայացնող միակ կերպարը՝ Սելինա Տողանը:

Մթանպուլի հայաշատ Բազըրքէոյ թաղամասում մեծացած, իրաւաբանական կրթութեամբ, Տողանի մուտքը քաղաքականութիւն, սակայն, նոյնչափ հանգիստ ու խաղաղ է: Առաջըրուելով ընդդիմադիր ժողովրդահանրապետական կուսակցութիւնից՝ վերջինս անակնկալի բերեց, թէ՛ հայ համայնքին, թէ՛ Թուրք ազգայնականներին, որոնք էջին զլանում նրա դէմ բազմատեսակ արշաւներ կազմակերպել թէ՛ մամուլի միջոցով, թէ՛ Մեծիսում:

Սելինա Տողանից Ցեղասպանութեան մասին ելոյթներ մենք չենք լսել եւ չի էլ խոստանում: Փոխարէնը՝ հայազգի կին պատգամաւորը իրեն սպասեցնել է ի տալիս ամէնուր, ուր ասելիք ունի՝ հայկական հին գերեզմանների աւերումը կանխելուց մինչեւ պատրիարքական ընտրութիւններ, հայալեզու մանկապարտէզի հիմնադրման պայքար, «Արմէն» ճամբարի դիմադրութիւն կամ հայ ֆեմինիստների մասին Թուրքերէն միակ գիրքը Մեծիսում թափահարելը:

Պատահական է, որ Մթանպուլի հայաշատ Շիշլի թաղամասում Սելինայի հետ մեր գրոյցը ակամայից ստացուեց աւելի շատ, ոչ թէ անցեալի, այլ ներկայի ճգնաժամների մասին:

Թուրքիայի հայութեան պաշտօնական ներկայացուցիչը թէ՛ Թուրքիայի պետութեան, թէ՛ ամբողջ աշխարհի առաջ մնում է պատրիարքարանը, Բանի որ Լոզանի պայմանագրով Թուրքիայում ազգային փոքրամասնութիւններ չկան, իսկ հայերը, յոյներն ու հրեաները գրանցուում են որպէս կրօնական փոքրամասնութիւն: 21-րդ դարում մեծի տեսնում ենք այն խնդիրները, որոնք ստեղծում են այս իրավիճակը եւ, ի վերջոյ, որքանով է յաջողում պատրիարքարանի համակարգել աշխարհիկ համայնքի խնդիրները նաեւ այն պարագայում, որ Բանի պաշտօնական ներկայացուցչութիւններ մեծ Թուրքիայում չունեն:

Մուլթաֆեան Սրբազանի պատրիարքութեան տարիներին ժամանակ, օրինակ, կարող եմ ասել, որ նա կարողացել էր համայնքի միջոց եւ հենց համայնքի խնդիրներով զբաղուել, կարողացող աշխարհիկ մարդկանց մի խումբ հաւաքել իր կողքին, որոնք զբաղուում էին համապատասխան խնդիրներով, այսինքն՝ այդ ամէնը ճիշդ ձեւով համակարգելու բանաձեւը գտել էր Մուլթաֆեանը: Այնպէս, որ նոր Ամերիկա բացառապետաբար կարիք չկայ, տարբերակներ կան՝ կամքի ու ցանկութեան պարագայում: Որովհետեւ ի վերջոյ պատրիարք լինի թէ պատրիարքի տեղապահ՝ նրա իրական կոչումը հոգեւորական լինելն է եւ կրօնական հարցերով զբաղուելն է: Անշուշտ, սա էլ պէտք է չմոռանանք, որ պատրիարքութիւնը միանշանակ պետական կառոյց է, պետութեան եւ համայնքի միջեւ այդ յարաբերութիւնը կառուցող մարմինն է, այնպէս, որ «Մենք անկախ ենք», «Պետութեան թոյլատուութիւն հարցնելու կարիք չունենք» եւ այլն, չկայ նման բան, այդ խոսակցութիւնները մի կողմ դնենք, լինենք իրատես: Երբեք էլ անկախ չի եղել Պոսոյ Հայոց պատրիարքութիւնը, ո՛չ Օսմանեան, ո՛չ հանրապետական շրջանում: Ըստ ինձ այժմ հիմնական խնդիրն այս ամէնը մեր ժամանակաշրջանին համապատասխան ձեւաչափին ու պայմաններին ճիշդ համապատասխանեցնելու հարցն է:

Մեծիսի հերթական նիստերից մէկի ժամանակ դուր հարցում էիք յղել Թուրքիայում ապրող հայերի թուաբանակի մասին եւ խնդրել բացել արխիւները, այդ բնութիւնը իսլամացուած հայերի: Որեւէ պատասխան եկա՞ւ:

Մենք մեր համայնքի բուն քանակը չգիտենք, իսկապէս մենք քանի՞ հազար հոգի ենք: Այո՛, ես այս մասին հարցրի իշխանութիւններին, երբ անձնագրերում էթնիկ պատկանելիութեան մասին գաղտնի գոտաւորումների մասին աղմուկը բարձրացաւ: Մեծիսում ներքին գործերի նախարարութեանը պաշտօնական հարցում յղեցի, այսինքն՝ եթէ այսպիսի մի բան ենք անում մեր գլխին, թող գոնէ դրական ինչ-որ բանի ծառայի, մենք մեր համայնքում իմանանք՝ քանի՞ հոգի ենք, քանի՞ հայ կայ, որպէսզի մեր ներքին խնդիրները աւելի նպատակային լուծենք: Հիւանդանոցներ ունենք համայնքային, դպրոցներ, մենք հաշուենք, օրինակ, իմանանք՝ մեր հայկական դպրոցները քանի՞ աշակերտ



Կարող են ընդունել եւ այլն: Ի հարկէ, իշխանութիւնները պատասխան չեկաւ:

Պոլսի քրիստոնեայ հայ համայնքի թուաբանակի մասին վերջին տուեալը, որ դեռ շարունակուում է շրջանառուել 60,000-ն է, սակայն այս թիւը բարձրաձայնուելիս վերջին մի Բանի տարիների առաւել ինտենսիւացած արտագաղթը հաշուի չի առնում եւ նոր տուեալներ պատրիարքարանի կողմից չեն հաղորդուել: Ըստ ձեզ՝ որքա՞ն է այս պահին սթանդարտաբան մօտաւոր թիւը:

Այո՛, յատկապէս վերջին շրջանում հայ համայնքի բաւականին մեծ արտագաղթ եղաւ: Յստակ է եմ կարող ասել, սակայն ըստ իս, որպէս քրիստոնեայ հայեր, Մթանպուլում մօտաւորապէս 45,000-ի սահմաններում ենք:

Թուում է, թէ Թուրքիայի հայութեան թիւ մէկ խնդիրը պէտք է լինի մայրենի լեզուով խօսելը կամ Ցեղասպանութեան մասին բարձրաձայնելը: Միւնչոյն հասարակական, սոցիալական ու բազմաթիւ այլ խնդիրներ նակտելի չեն մեզ համար դրսից:

Բազմաթիւ խնդիրներ սկսում ես նկատել պատգամաւոր դառնալուց յետոյ: Շատ-շատ մեծ խնդիրներ կան, համակարգելու, յատկապէս երիտասարդներին առաջնորդելու հարցում ահռելի գործ կայ անելու: Խառն ամուսնութիւններից մինչեւ ազգականների միջեւ հարկադրուած կամ կամաւոր ամուսնութիւններ, վախենալու աստիճանի տնտեսական խնդիրներ, վերջին շրջանում նաեւ գործազրկութիւն: Մի՛ կարծէք, թէ այս ամէնը մեզ շրջանցում է, այս ամէնը կան:

Կարեւոր է ոչ թէ ուղղակի պայքարել, այլեւ կարողանալ ծառայել մէկ ընդհանուր նպատակի: Տեսէք, ունենք 17 վարժարան, համայնքային բազմաթիւ կառույցներ, հիւանդանոցներ, սակայն դրանք մէկ ընդհանուր կառույցի չեն պատկանում: Խնդիրը սա է՝ ամէն մի դպրոց դեկավարուում է համապատասխան եւ համանուն հայկական հիմնադրամի կողմից, որոնք առանձին կառույցներ են եւ միմիանցից անկախ: Այո՛, այժմ հիմնադրուել է համայնքային հիմնադրամների ընդհանուր միութիւն, սակայն դրանց ժողովներն ու խորհրդակցութիւնները պէտք է բաց լինեն ժողովրդի առաջ:

Ի հարկէ՞ դրական բաներ էլ են լինում: Օրինակ՝ «Արմէն» ճամբարում վերջապէս երեխաների գարգացման կենտրոն է կառուցուելու: Սա երկար տարիների պայքարի արդիւնք է: Նաեւ Գարեկէօզեան վարժարանի ծրագրերն են շատ ոգեւորող ու հայրենանպաստ, հրաշալի գործ է արուել:

Նոյնիսկ այսօր, երբ կապի միջոցները, այլընտրանքային գրակառուութիւնն ու տարբեր ուսումնասիրութիւններ անցկացնելու հնարաւորութիւններն առաւել Բան հասանելի են, Հայաստան - Սփիւռք - Թուրքիայի հայութիւնը կապը մնում է չափազանց թույլ, բոլոր կողմերից շփումը քիչ է, իսկ կարծրատիպերն ու վախերը շատ-շատ: Չէ՞ք կարծու, որ նախորդ սերունդն այս հարցում շատ է թերացել, եւ ինչպէ՞ս էք տեսնում խնդրի գոնէ փոքր չափով լուծումը այժմ:

Սա էլ մէկ այլ խնդիր է: Հիմա մենք համայնքի մի խումբ ներկայացուցիչներով որոշել ենք կրթական տարբեր ծրագրերի հետ կապուած նախագիծ իրականացնել: Աշխարհով մէկ սիրուած հայազգի ուսանողների եւ Թուրքիայում ապրող հայ երիտասարդների կապը ստեղծող մի նախաձեռնութիւն պէտք է լինի: Այդ ընթացքում մենք հասկացանք, որ Սփիւռքն ու Սփիւռքի կա-

ռոյցները մեծ հաշուով չի պատկերացնում եւ յաճախ տեղեկ չէ Թուրքիայի հայ համայնքի խնդիրներից, տուեալ դէպքում՝ կրթական խնդիրների մասին է խօսքը: Եթէ իմանան՝ գուցէ Թուրքիայի հայերի հետ կապուած առանձին մի քաղաքականութիւն որդեգրեն, որի կարիքը այսօր շատ կայ: Հիմա մենք դրա վրայ ենք աշխատում: Անելու շատ բան կայ, այստեղ նորից մեր համայնքային միութիւններին պիտի վերադառնամ: Օրինակ՝ մեր հայկական վարժարանների ուսուցչուհիները կարող են գնալ, վերապատրաստուել Պէրուիի Հայկազեան համալսարանում, ինչո՞ւ ոչ, սրանք մեծ ծախսերի հետ կապուած բաներ են, բայց անհրաժեշտ են:

Տիկին Սելինա, պատմէ՛ք մեզ, խնդրում եմ, որպէս Թուրքիայի Մեծիսի միակ կին պատգամաւոր, Սփիւռքի հայութեան հետ շփման ձեւ ունեցած փոքրամասնութեան մասին:

Հանդիպումներ եմ ունեցել ԱՄՆ-ի տարբեր քաղաքների հայ համայնքների հետ: Ինձ մի կողմ դիր, Թուրքիայի ընդդիմադիր կուսակցութիւնների անուններն անգամ լսած չկային մարդիկ: «Օ՛, ինչպէ՞ս այսինքն Թուրքիայի Մեծիսում ես» տիպի արձագանգներ էի ստանում, կարծես ուզեցնան ասել «Խե՞նթ ես, ի՞նչ է», կարծես պաշտամունքի առարկայ էի: Օրերով նստում պատմում էի, նաեւ այն, որ բացի Թուրքիայի հայերից նաեւ համայն հայութեան շահերն եմ այնտեղ ներկայացնում, շատ գեղեցիկ ժամանակ անցկացրեցինք այդ մարդկանց հետ: Բոլոր կարծրատիպերն ու նման ծայրային արձագանգները չհիմնադրուելից են գալիս: Մարդիկ Թուրքիայում հայ կանանց պայքարի մասին Լեռնա չք-մէքչիօլուի գեկոյցը առանց աչքերը թարթելու, առանց մէկ վայրկեան անգամ դահլիճը լքելու լսեցին:

Հրանդ Տիգրի մահը ոչ միայն նոր գարթօն էր Թուրքիայի հայութեան համար, այլեւ մի նոր էջ բացեց Թուրքիայի հայերի հետ մեր՝ մինչ այդ գրեթէ մեռած յարաբերութեան մէջ: Սակայն ի վերջոյ այդ նախապարհին էլ Հրանդ Տիգրի շատերի համար մնաց որպէս «1,500,000+1», ինչը հակասում է հենց Տիգրի գաղափարախօսութեանը, ով ասում էր «Եկէ՛ք մի փոքր էլ ոչ թէ սպանողների ու սպանուողների, այլեւ կենդանի մնացածների մասին խօսենք...»

Ուզեցնք, թէ չուզեցնք, պէտք է ընդունենք, որ Հայաստանից դուրս Հայաստանի բնակչութիւնից մի քանի անգամ շատ հայեր են ապրում, եւ որքան էլ որ համայնքային կառուցուածքը ամէն երկրում տարբեր լինի, մենք պէտք է իրատես լինելով մտածենք սա համայն հայութեան օգտին ճիշդ օգտագործելու մասին, սրա համար է, որ արժի ջանք թափել: Այլեւս ոչ թէ նստելու ու լալու, այլ տուեալ ժամանակաշրջանի կողմից մեզ մատուցուած հնարաւորութիւնների ճիշդ օգտագործման, մեր երեխաների ապագան առաւել լուսաւոր դարձնելու հարցի շուրջ պէտք է կենտրոնանանք: Ես միշտ սա եմ ասում. շատ երջանիկ մարդ եմ համարում, քանի որ գիտեմ իմ մայրենին, գիտեմ նաեւ երկու օտար լեզու եւ այն երկրի լեզուն, որտեղ ապրում եմ: Սա իմ հարստութիւնն է: Իմ շրջապատում բոլոր հայ ընկերներս երեխաները ներկայում հայերէն խօսում են: Իմ հայրը, օրինակ, հայերէնի հարցում շատ է դժուարանում, լսելիս հասկանում է, բայց չի կարողանում լալ խօսել: Երեխաս սիրում է հայերէնը: Մեր երեխաների մէջ այս գիտակցութիւնը պէտք է գարգացնենք, որպէսզի նրանք լինեն ե՛ւ լալ հայ, ե՛ւ լալ աշխարհաքաղաքացի: Դրա համար ազգայնական լինելու կարիքը չկայ:

Սոֆիա Յակոբեան



# Ghadir


## Meat & Restaurant

Մեր յարգյալ յաճախորդներուն կը տեղեկացնենք, թէ GHA DIR մտափաճառատու են ու ճաշարանի փոխադրուած 1, առկի բնդարձակ և յարմարաւէտ կէտքոն ւնը՝ նորագոյն եւ լաւագոյն ձևով ծառայելու մեր յաճախորդներու և:

Մեր ճաշարանէն ներս կը սպասարկուին միջին արևելեան զանազան ճաշատեսակներ, օրինակ՝ մենէիշ, պանիրով պեթրէկ, հաւու եւ կովու միսով շաուրմա, հաւու եւ կովու միսով խորոված, մաաշոթ, չի բօֆթ, լման հաւու խորոված, աւճալիս եւ այլ տեսակի սղանդէրներ:

**ՆՈՐ ՀԱՍՅԷ՝**  
 1848 Lawrence Avenue East  
 Scarborough, Ontario M1R 2Y4

**ՀԵՌԱԶԱՅՆ՝**  
 (416) 750-7404 կամ (416) 750-7400



Armenian Community Centre of Cambridge Presents

# ԽԱԶՎԵՐԱՑԻ ԱՄՈՒՍԱ-ԼԵՐԱՆ ՔԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ



## Armenian Heritage Celebration


## Elie Berberian & His Band

9

&

10

Սեպտ. / Sept.



**Saturday September 9<sup>th</sup>, 2017 | Price: \$25**

| Kids 5-10 Years Old - **Price: 10\$**

- Շաբաթ Մատաղորհնէք ժամը 6-ին
- Խրախճանք ժամը 8-ին

**Sunday September 10, 2017 | FREE Entrance**

- Կիրակի Պատարագ ժամը 11-ին
- Քերիսայի Օրհնութիւն ժամը 1-ին

Քաճեղի Մթնոլորտ, Աանդական Տաղ Ջուրնա,  
Քամադամ Ճաշեր, Փոքրերու Խաղակայք

For Hotel Reservations Call:

Cambridge Hotel | 700 Hespeler Rd. Cambridge, ON (519) 622-1505 | Discount code: ACC

[www.armeniancentre.cambridge.org](http://www.armeniancentre.cambridge.org)

15 International Village Dr., Cambridge




**OPEN 7 DAYS  
A WEEK!**

WEEKDAYS: 8 AM - 7 PM  
SATURDAY: 8 AM - 6 PM  
SUNDAY: 8 AM - 5 PM



WE SPECIALIZE IN  
LAHMAJOUN, FATAYER  
AND MANAKEESH!


WE ARE NOW  
MAKING SUJUKE  
LAHMAJOUN!



**LOCATION:** 2094 LAWRENCE AVENUE EAST  
ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN

# VILLAGE GREC

CONNU POUR LE MEILLEUR SOUVLAKI ET GYRO EN VILLE !



KNOWN FOR THE  
BEST SOUVLAKI  
& GYRO IN TOWN!



4491, boul. Samson, Chomedey, Laval • Tel: 450 681-3333

Dim. à mer. : 11h à 11h      Sun. - Wed. 11am - 11pm  
Jeudi à sam. : 11h à minuit      Thurs. - Sat. 11am - midnight

**ANI**

*Ristorante*

905.761.6484

1450 Clark Ave. West,  
Thornhill ON L4J 7R5



[www.aniristorante.ca](http://www.aniristorante.ca)

*Fine Dining  
Catering  
Party Room*  
FOR UP TO 75 PEOPLE

**Իրաքանչիւր  
Գիրք**

**Միայն  
20\$**

**ՆԱՐԵԿ**

- Իմ Առաջին Աստուածաշունչս
- ՆԱՐԵԿ
- Պատանիքի Աստուածաշունչը

Կարելի է գնել  
Առաջնորդարանի Գրախանութին

514-856-1200  
prelacy@armenianprelacy.ca

**ԳԱՆԱՏԱՅԻ**

**ՔԷՍԱՊՑԻՆԵՐՈՒ**

**13-րդ  
ՀԱՄԱՀԱԲԱՔ**

**ՊԱՇՏԱԳԼԱՅՈՒԹԻՒՆ**

Հովանաւ որդի բնամբ  
Բեճարիճի Հայ Կեդրոնին

**Կիրակի 6 Օգոստոս, 2017**  
Shades Mills Conservation Area  
450 Avenue Road, Cambridge  
Sunday, August 6, 2017

Քեռազգայիններու յատուկ առանդական հաշեր, բմբունկ, գունճա,  
Քեռառայի շորքշորք, «ճնառարայի» սյառորառառքիճի,  
փրփիռք եւ այլ տեսակի խաղիք

Սրբով ճրաճրբրառճ նմ Գեռնառայի եւ շրքանի բոլոր խաղերը եւ թճառզգայինը

Թառնկեռք տեղեկեռքեռնառք հոճոքը հոճոքեռք լեռնառքինկ (519) 740-2336  
For More Info, Please Call or Email: revsurmarstan@ymail.com (519) 240-5753

# Ի ՅՈՒԾ Ընկերուհի Ծափէն

Այդպէ՛ս ճանչցուած էր ան բոլորին կողմէ՛ ընկերուհի Ծափէն:

Ընկերուհի՛ իբրեւ կուսակցական, ընկերուհի՛ իբրեւ ՀՕՄ-ական, ընկերուհի՛ իբրեւ համազգայնական: Դոկտոր Ծափէ Տէր-Մելքոնեան-Մինասեան, փրոֆեսոր Մինասեան նման կոչականներով չէ, որ կը մօտենայինք իրեն, եւ այնպէս կը թուի ինձի, որ եթէ այդպէս դիմէինք իրեն, պահ մը շփոթի կընար ենթարկուել, թէ խօսքը իրապէս իրեն՝ կ'ուղղուէր, թէ՞ մէկ ուրիշին:

Ընկերուհի Ծափէն

Ֆրանսայէն այդպէս եկաւ ան Մոնթրէլ տարիներ առաջ, այդպէս ալ մնաց մինչեւ վերջին շունչ:

Արդարեւ, մեզի համար անակնկալ եղաւ, երբ օր մըն ալ լսեցինք, որ տարեցներու բնակավայր մը փոխադրուել էր Այդ կորովի, գործունեայ, միշտ պատնէշի վրայ գտնուող մեր ընկերուհին ծերանոց մտնէ, թէկուզ ամեն տեսակ յարմարութիւններով օժտուած: Սակայն այդ վայրէն ալ ան պիտի շարունակէր ներկայութիւն ըլլալ մեր հաւաքական կեանքին մէջ: Պարբերաբար պիտի մասնակցէր մեր ժողովներուն, նոյնիսկ անկեղծութեամբ վրայ, ու մասնակցէր իրողապէս, խօսք առնելով, կարծիք յայտնելով:

Մեր ընկեր Վազգէնը հաւատարիմ

պահակի նման, ո՛չ թիկնապահի՛ նման, զինք մեր ժողովներուն կամ ձեռնարկներուն պիտի բերէր, երբ ան ի վիճակի զգար ու տրամադրութիւն ունենար դալու: Ի հարկէ, երկարամեայ աւանդութիւնն էր, որ կը շարունակէր ընկէ. Ծափէն, իբր պարտաճանաչ անդամը իր կուսակցութեան կամ գոյգ միութիւններուն:

Իր ներկայութիւնը անպայման բա՛ն մը կ'աւելցնէր այդ ժողովներուն մէջ, նոյնիսկ եթէ խօսք ալ չառնէր: Ուրախ էինք, հանգիստ էինք, որ ան հոն էր, մեզի հետ, մեր մէջ, մեզմէ՛ մէկը:

Իմ ծանօթութիւնս ալ սկսաւ իր Մոնթրէլ ժամանած օրերէն իսկ, թէեւ անունով ծանօթ էր ան ինձի, յատկապէս որպէս «Յառաջ»-ի աշխատակից: Այստեղ ան ամուսնացաւ ծնողքիս անմիջական ընկերական շրջանակին մաս կազմող ընկ. Վարուժանի հետ: Առիթները չէին պակաս իրեն հանդիպելու, սակայն նաեւ կը նկատէի, որ ան երբեք չէր մասնակցեր զուտ ժամանց-գրօսի համար տեղի ունեցող հանդիպումներուն, հաւանաբար իր ազատ ժամերը աւելի շատ իր գրական աշխատանքներուն յատկացնելու համար:

Ապա աշխատակից-խմբագիր յարաբերութիւնը ստեղծուեցաւ, երբ ինք սկսաւ կանոնաւոր մասնակցիլ «Հորի-

զոն»-ի աշխատանքներուն, նոյնիսկ մաս կազմելով անոր նախապատրաստական յանձնախումբին, որ տարի մը ամբողջ գործեց ծրագրելու համար հրատարակուելիք թերթին բնոյթը, բովանդակութեան տեսլականին եւ այլն: Բոլոր այդ ժողովներուն ան միշտ գործնական անձի մը տպաւորութիւնը թողեց, բան մը, որ հետագային ալ տեսայ միութեանական աշխատանքներու ընթացքին: Նոյնը՝ երբ ան առեն մը մաս կազմեց Հայ դատի երկրեզու տեղեկագրի (La Cause Arménienne / The Armenian Cause) խմբագրութեան:

Ես, սակայն, միշտ պարտաւոր էի զգուշութեամբ վարուիլ «Հորիզոն»-ի համար իր գրած յօդուածներուն հետ, քանի որ շատ նրբանկատ կերպով պէտք է տեղեկացնէի իրեն այն փոփոխութիւններուն մասին, որ կ'ընէի թերթի լեզուական ու խմբագրական միօրինակութիւնը պահպանելու համար, բան մը, որմէ կը թուէր, թէ շատ չէր անհարգելի...

Դրուագ մը յատկապէս գրոշմուած կը մնայ յիշողութեանս մէջ. շրջանային ժողովի մըն էր, եւ օրակարգի նիւթը՝ «Հորիզոն»-ն էր: Ընկէ. Ծափէն ձայն առաւ եւ դիտել տուաւ, որ թերթը «չատ Վրէժ-Արմէն կը հոտէր»: Այն ատեն գուցէ իբր քննադատութիւն առնուեցաւ իր այդ ըսածը, թերեւս ալ իր նպատակը



այդ էր, սակայն տարիներու հեռավորութենէ երբ կը վերյիշեմ այդ պահը, հարց կու տամ ես ինձի, թէ արդե՞օք նաեւ անուղղակի գնահատանք մը չէր այդ ի տես այն ժամանակին ու ճիգին, որ խմբագիրը կը տրամադրէր ու կը ներդրէր թերթին դաշնակցականավայել, հայալայել ու ժամանակակից նկարագիր մը տալու իր փորձերուն մէջ...

Ընկէ. Ծափէ մնաց հաւատարիմ աշխատակից, խմբագիրէն ու խմբագիրներէն անկախ, ու իր արժէքաւոր յօդ-

ԾԱՔԷ... Ծար. էջ 13

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

## Երդման արարողութիւն

Ստորեւ ներկայացուած խօսքը արտասանուած է 12 տարի առաջ Խանգուցեալ ընկի. Տաթէ Տէր Մելքոնեան Մինասեանի կողմէ, ԳՅԴ նորագիրներու երդման արարողութեան մը ընթացքին:

Մոնթրէլայի ՀՅԴ Երիտասարդական Միութեան կուսակցական շարքերը անցնելու համար ներկայացող թանկագին ուսանող բարեկամներ

Երբ քիչ ետք ձեր հանդիսաւոր երգումը կատարէք, մեծագոյն հրճուանքով եւ գուրգուրանքով ձեր ճակատը առաջին համբուրողը կ'սպասուի ձեր կողմէ ձեր կոչելով ընկերներ: Այս պահուստ ձեր չափ կ'սպասուի ձեր, որովհետեւ իմ երկարամեայ կուսակցական կեանքիս մէջ առաջին անգամն է, որ նորագիրներու «կնքամայր» կ'ըլլամ:

Հետեւաբար պարտականութիւնս է քանի մը կարեւոր յիշեցումներ կատարել, որպէսզի գանոնք ձեր մտքին մէջ ունենալով կատարէք ձեր երգումը:

Առաջինը այն է, որ դուք կ'անցնէիք շարքերը կուսակցութեան մը, որ երբեք չէ՛ եղած եւ երբեք չի՛ կրնար դառնալ ինքնանպատակ կազմակերպութիւն մը: Ան 115 տարիներէ ի վեր գործած է եւ, այնքան ատեն որ հաւատարիմ կը մնայ իր ծրագրին, պիտի շարունակէ գործել յանուն Հայ ժողովուրդի եւ Հայաստանի գերագոյն շահերուն, այնպէս ինչպէս բանաձեւուած է իր ծրագրին մէջ եւ ճշդուած՝ իր կանոնագրին մէջ:

Կասկած չունիմ, որ դուք, որպէս գիտակից ուսանողներ, արդէն ծանօթ էք Դաշնակցութեան եւ ծրագրին, եւ կանոնագրին: Հետեւաբար արդէն դիտէք, որ կուսակցականի երդումը տուած պահէն դաշնակցական ընկերը միա՛յն տալիք պիտի ունենայ՝ կուսակցութեան ազգային իտէպէն եւ բարոյական արժէքներէն մեկնելով՝ մեր ազգային ներկան բարելաւելու եւ ապագան ապահովելու ճիգերուն ի նպաստ: Իր տուածին դիմաց առաջն քայլը սպասելու անձնական շահ, փառք կամ պատիւ: Իր զգացած ներքին գոհունակութիւնը եւ ընկերներուն գնահատանքը պիտի ըլլան իր մեծագոյն վարձատրութիւնը:

Իր գոյութեան 115 տարիներուն

ընթացքին՝ այս կուսակցութիւնը իր ծրագրին ու կանոնագրին կարգ մը գործնական կէտերը պատշաճեցուցած է հայութեան եւ Հայաստանի պարտադրուած ծանօթ իրականութիւններու: Բայց ազգային իր հիմնական նպատակները, բարոյական եւ ընկերային սկզբունքները մնացած են անփոփոխ, որովհետեւ իր անուան առաջին բառն է՝ ՀԱՅ, առանց որեւէ խտրութիւն դնելու կրօնական յարանուանութիւններու, տեղացիական կամ հպատակութեան այլեւայլ պատկանելիութիւններու միջեւ:

Երկրորդ բառն է՝ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ, այսինքն՝ նախկին ստրկամտութենէն, հին թէ՛ նոր, կոտորակող եւ քնացնող ազդեցութիւններէն ձերբազատել հայութիւնը:

Իսկ կանոնագիրը կը ճշդէ կազմակերպութեան կառոյցի ժողովրդավարական (democratic) գործելակերպը: Անդամը մաս կը կազմէ խումբի մը, որուն ընտրած պատգամաւորը կը մասնակցի Շրջանային Պատգամաւորական ժողովին, որուն ընտրած պատգամաւորն ալ կը մասնակցի Ընդհանուր ժողովին: Իւրաքանչիւր մակարդակի վրայ ընկերը ազատ է օրակարգի կամ որեւէ հարցի մասին իր անձնական կարծիքը յայտնելու: Բայց այս մակարդակներէն ոչ մէկուն վրայ ընկերը ազատ է իր անձնական կարծիքին համեմատ գործելու կամ վարուելու: Գործին բնոյթն ու ձեւը, իւրաքանչիւր մակարդակի վրայ, կ'որոշուի կարծիքներու փոխանակութեանէ ետք՝ մեծամասնութեան ձայնով: Իսկ երբ խումբի մակարդակէն մինչեւ ՀՅԴ Ընդհանուր ժողով փոխանցուած բանաձեւուած կարծիքը կ'որդեգրուի այնտեղ, ան կը դառնայ կուսակցութեան որոշումը, որ պարտագիր կը դառնայ բոլոր շարքերուն համար: Բան մը, որ բնականօրէն կ'ընդունինք, որովհետեւ կը համապատասխանէ այն իտէպէն եւ կազմակերպուած գործունէութեան, որոնց հաւատարիմ մնալու երդում տուած ենք:

Իսկ երդում կու տանք, որովհետեւ կը հաւատանք, թէ դաշնակցական ըլլալ կը նշանակէ քաղաքական հասունութիւն ձեռք ձգել, դառնալու համար քաղաքական արթուն պահակն ու սպասա-

ւորը ոչ միայն Հայ Դատին, այլ նաեւ՝ արթուն պահակն ու սպասաւորը դառնալ նոյնքան կարեւոր ազգային-մշակութային-բարոյական մեր արժէքներուն, որոնց շնորհիւ հինէն ի վեր պահած ենք մեր գոյութիւնը եւ դարձեալ ասոնց շնորհիւ պիտի կարենանք մեր ինքնուրոյն դիմագիծով յարստեւել այսօրուան աշխարհի այլասերող միջոցառումներէ, լաւ գիտնալով որ Ֆիզիքական գոյութեան չափ կարեւոր է մեր այս արժէքներուն պահպանումն ու զարգացումը:

Այս պատճառով է, որ դաշնակցութիւնը ստեղծած է իր քոյր կազմակերպութիւնները՝ Համազգային Մշակութային միութիւն, Հայ Օգնութեան Միութիւն, Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութիւն, Հայ Երիտասարդներու Դաշնակցութիւն (ԱԿԴ), վերջերս՝ Պատանեկան Միութիւն եւ Դաշնակցական Ուսանողական Միութիւն: Եւ ամէն տեղ նեցուկ կը կանգնի հայկական ամէնօրեայ եւ միօրեայ վարժարաններուն: Ուրեմն՝ իւրաքանչիւր ընկերը պարտականութիւններուն մաս կը կազմէ նաեւ գուրգուրալ, օժանդակել, անդամագրուիլ այս միութիւններուն:

Դաշնակցականը պէտք չէ՛ նեղմիտ ըլլայ: Ան պէտք է գիտնայ նաեւ գնահատել մեր ամբողջական շրջանակէն դուրս այն բոլոր անձերն ու գործունէութիւնները, որոնք կը նպաստեն հայութեան ընդհանուր շահերուն եւ վերելքին:

Սփիւռքի մէջ գիտենք, թէ մեր արտաքին միջավայրը որքան կարեւոր ազդեցութիւն ունի մեր վրայ՝ նիւթական, բարոյական, ընկերային, իրաւական եւ այլ ամբողջէ ներս:

Դուք՝ համալսարանական ուսանողներ, պարզ է, միւրճուած էք ձեր մասնագիտական աշխատանքներուն մէջ, եւ, ճիշդն ասած, այժմ ձեր առաջնահերթ գործը ձեր ուսումը աւարտելն է լաւագոյն արդիւնքներով: Այնուհետեւ պիտի ստեղծուի ապրուստի հոգը, հանգիստ կեանք մը ստեղծելու ճիգը, եթէ ուշադիր չըլլաք՝ օտար ամուսնութիւն մը կնքելու փորձութիւնը: Սովորական պատճառներ, որոնք մեր ազգային հարուստ ժառանգութեան անձանօթ հայերու մօտ կը ստեղծեն օտարներու նկատ-

մամբ ստորագասութեան զգացումը (inferiority complex), կը թուլցնեն ազգային պատկանելիութեան տեսակէտէն հպարտութիւնը եւ ի վերջոյ կ'օտարացնեն, մինչդեռ մեր երիտասարդներէն իւրաքանչիւրը իր մեծ կարեւորութիւնը ունի մեր փոքրամիւ ազգին համար:

Ես հաւատացած եմ, որ իր ազգային արժէքներուն ծանօթ եւ անոնցմով հպարտ հայր կրնայ թէ՛ արտաքին շրջապատի օրէնքները յարգելով զարգանալ, բարձրանալ, եւ թէ՛ իր ազգային ժառանգութեան տէր կանգնիլ, զայն օտարներուն ծանօթացնելով՝ անոնց զգացած հիացումով ալ՝ հրճուի:

Գալով ձեզի, ճիշդ է, որ ձեր դասերով ծանրաբեռնուած էք: Բայց տուած ըլլալով Դաշնակցութեան շարքերը մտնելու ձեր որոշումը, վաստ՛հ եմ, որ պիտի կարենաք ձեր ազատ պահերէն անպայման բաժին հանել ձեր հայերէնը զարգացնելու եւ մեր Պատմութեան ու մշակոյթի ճանաչումը խորացնելու ճիգին: Դաշնակցութիւնը եւ հայութիւնը այնքան պէտք ունին արեւմտեան առումով մասնագիտացած եւ հայկական առումով մշակուած յանձնառու երիտասարդներու:

Շատ կարեւոր է նաեւ, որ հետեւիք այսօրուան մեր իրականութիւններուն: Կամքի հարց է՝ «Հորիզոն» շաբաթաթերթ կարդացէք: Ամէն օր 10-15 վայրկեան յատկացուցէք internet-ի հայերէն կամ անգլերէն site-երէն հայկական լուրեր կարդալու: Ամէն տեսակէտով ձեր կեանքը արժեւորող բոլոր միջոցները ձեր ձեռքին ունեցէք:

Եւ վերջապէս՝ պահանջեցէ՛ք, որ ամէն տարի ուսանողական խումբի այցելութիւն կազմակերպուի դէպի Հայաստան: Եւ դուք՝ առաջին առթիւ մասնակցեցէք այդպիսի ճամբորդութեան: Որպէսզի ձեր մէջ ամբապնդուի հպարտութեան այս սքանչելի զգացումը թէ՛ «մե՛նք ալ մարդ ենք եղել», մե՛նք ալ հայրենիք եւ պետութիւն ունինք: Որպէսզի վերագարձին աւելի՛ վճռակամօրէն շարունակէք Հայ Յեղափոխական Դաշնակցութեան միջոցով ծառայել հայութեան եւ Հայաստանի գերագոյն շահերուն:

Այժմ՝ եթէ պատրաստ էք, կրնանք ընդունիլ ձեր երդումը:

## Թորոնթոյի ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանին տնօրէն Գրեգորիան Գրեգորեան Եւ Ռաֆֆի Սարգիսեանը

Թորոնթոյի ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանի Կրթական մարմնին անուանով կ'ուզենք բարձր տեղեկացնել, որ 28 Յունիս 2017-էն սկսեալ վարժարանիս տնօրէն տ.քթ. Արմէն Մարտիրոսեան անձնական պատճառներով հրաժարեցաւ իր պաշտօնէն: Ան ազնուաբար խոստացաւ իր ամբողջական գործակցութիւնն ու օժանդակութիւնը ներդնել յառաջիկայ ամրան ամիսներուն՝ պատրաստուելու համար 2017-18 ուսումնական տարեշրջանին, եւ մենք վստահ ենք իր անվերապահ աջակցութեան՝ փոխանցումի այս հանգրուանին:

Առիթն օգտուելով, կ'ուզենք մեր երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը յայտնել պրն. Արմէն Մարտիրոսեանին՝ իր երկար տարիներու ծառայութեան համար, որ մեծապէս օժանդակեց վարժարանի վերելքին: Շուտով, պատշաճ կերպով եւ յատուկ ձեռնարկով պիտի մատուցենք մեր գնահատանքը իրեն վաստակին ու ծառայութեան համար:

Ուրախութեամբ կ'ուզենք յայտարարել, որ վարժարանի նոր տնօրէնի պաշտօնին կոչեցինք բոլորիդ ծանօթ պրն. Ռաֆֆի Սարգիսեանը:

Ռաֆֆի Սարգիսեանը շրջանաւարտ է Թորոնթոյի ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանէն (1997), իր Պսակաւոր Արուեստից տիտղոսին արժանացած է պատմագիտութեան (York University, 2006) եւ ապա՝ կրթութեան մէջ (Trent University, 2008), իսկ Մագիստրոսի աստիճանին՝ կրթութեան ծիրին մէջ (York University, 2012): Ռաֆֆին, իբրեւ վկայեալ ուսուցիչ, միացած է ՀՕՄ-ի

Ամէնօրեայ վարժարանի աշխատակազմին, նախ որպէս երկրորդական կարգի ուսուցիչ եւ աշակերտական խորհրդատու (2008-2011) եւ ապա՝ որպէս փոխ տնօրէն (2011-2017): Ան 2016-ին արժանացած է Օնթարիո նահանգի գոյգ տնօրէնութեան վկայագրներուն:

Ռաֆֆին Սառա Քորնիլի Յեղասպանութեանց Ուսուցման Հիմնարկի Հիմնադիրն է եւ նախկին տնօրէնը: Իր եղբօր հետ միասին հրատարակած է «Խոկացող կուռնկը» խորագրով բանաստեղծութիւններու հաւաքածոն:

Վերջերս իր պատրաստած Հայկական Յեղասպանութեան դասաւանդման նիւթով ուսումնասիրութիւնը հրատարակուած է Քալիֆորնի համալսարանի հրատարակչատան կողմէ:

Կը Շնորհակտենք պրն. Ռաֆֆի Սարգիսեանը՝ ցարգ ձեռք ձգած իր իրագործումներուն համար, եւ կ'ողջունենք զինք՝ մեր վարժարանի տնօրէնի իր նոր պաշտօնին համար:

Մեր վարժարանի անցնող 38 տարիներուն ընթացքին, հպարտութեամբ կը հաստատենք, որ ունեցանք նուիրեալ եւ անխնդ ծառայող տնօրէններ, որոնց կը պարտինք մեր վարժարանի աշակերտութեան յաջողութիւնները, եւ որոնց շնորհիւ մեր վարժարանը գրեցաւ հաստատ հիմերու վրայ: Կը հաւատանք, որ պրն. Ռաֆֆի Սարգիսեանը, հետեւելով նոյն ուղիին, մեր վարժարանը պիտի հասցնէ նոր բարձունքներու եւ պիտի սատարէ մեր աշակերտներուն յաջողութեան:

## ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՑԵԼԵՑ MANOIR CARTIERVILLE



Ուրբաթ, 14 Յունիս 2017-ին, Բաբգէն Արքեպիսկոպոս, այցելեց Manoir Cartierville, ընկերակցութեամբ Հայ Օգնութեան Միութեան «Սօսէ» Մասնաճիւղի ատենապետուհի՝ տիկին Լիւսի Շահինեանի եւ Հոգեշնորհ Տ. Վարդան Վրդ. Թաշճեանի:

Մերանոցին մէջ Սրբազան Հօր դիմաւորեցին Հայ Օգնութեան Միութեան Սօսէ Մասնաճիւղի «Տարեցներ Այցելող Յանձնախումբը» եւ բարի գալուստ մղեցին Առաջնորդ Սրբազան Հօր: Ապա, տարեցները աղօթքներով եւ երգերով ուրախ մթնոլորտ մը ստեղծեցին:

Բաբգէն Սրբազան հանդիպեցաւ իւրաքանչիւր տարեցի հետ անձամբ, ծանօթացաւ անոնց եւ ապա իր սրտի խօսքը փոխանցեց ըսելով. «Մենք պէտք է սորվեցնենք մեր երիտասարդ սերունդին, յարգել մեծերը: Աւետարանը կ'ըսէ, «պատուէ հայրդ ու մայրդ», որովհետեւ եթէ մենք այսօր չպատուենք մեր ծնողներն ու տարեցները, ապագայի հաշուով մեր զաւակները նոյն վերաբերմունքը պիտի ցուցաբերեն մեր նկատմամբ:

Սրբազան Հայրը իր խօսքին մէջ կարեւորեց, որ հայրերուն եւ մայրերուն աղօթքին ու օրհնութեան կարիքը ունինք, յաջող եւ օրհնաբեր կեանք մը ապրելու: Բաբգէն Սրբազան իւրաքանչիւր տարեցի «խաչ» մը նուիրեց եւ աղօթագիրք բոլոր ծառայող ՀՕՄ-ուհիներուն:

## Ս. Գէորգ եկեղեցւոյ Կոլֆի տարեկան մրցաշարք



Ս. Գէորգ եկեղեցւոյ Կոլֆի տարեկան մրցաշարքը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 15 Յունիս 2017-ին, Club de Golf Ste Rose դաշտին վրայ, մասնակցութեամբ 130 անձերու: Երեկոյան ընթրիքի ընթացքին կատարուեցաւ մրցանակներու բաշխումը եւ վիճակահանութիւն, որուն ներկայ էր Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չարեան եւ Ազգային վարչութեան անդամներ: Այս տարուան մրցաշարքը Տրդն էր, որ իրագործուեցաւ յանձնախումբին հետեւողական եւ բժախնդիր պատրաստութեամբ:

Ձեռնարկի հասոյթէն կատարուեցան երկու նուիրատուութիւններ. 5000 տոլար՝ Fondation Centre de Cancérologie Charles Bruneau-ի եւ 5000 տոլար՝ Ազգային Առաջնորդարանի «Մանդակունի» ֆոնտին:

Այս առթիւ, շնորհակալութիւններ ձեռնարկի հիմնական հովանաւորներուն (Banque Scotia, Rody Ramia, Firma, Jacob & Jacob, Prodev եւ RE/MAX Action) եւ այլ հաստատութիւններուն, որոնք իրենց նիւթական օժանդակութիւնը բերին:

Կազմակերպիչ յանձնախումբը արդէն կը ծրագրէ 2018-ի մրցաշարքը:



**ՀՕՄ-ի Մոնթրէալի Սօսէ մասնաճիւղի ընկերային ծառայութեան գրասենեակը բաց է ամէն հինգշաբթի ժամը 12:00-էն 4:00:**

Այլ օր ժամադրուելու համար հեռաձայնել 514 335-2222 թիւին:



Այցելեցէք Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ կայքէջը՝ **www.sourphagop.net**

**ALINE BEKEREJIAN**  
NOTAIRE • NOTARY

**ՆՈՏԱՐ ԱԼԻՆ ԴԵՔԵՐԵՃԵԱՆ**

Achat	Ստեւտոր	Purchase
Hypothèque	Անշարժ կալուածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսատրում	Refinance
Mandat	Պատուէր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կալուածք	Estate
Marriage	Սնուանութիւն	Marriage
Procuratation	Փոխակորոպիւր	Power of Attorney

180, rue Fleury ouest  
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222  
F 514.381.1818

aline.b@notarius.net  
www.abnotaires.com

Շատալոյսները կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

Voyages **HAIG** Travel

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ **(514) 284-7676**

**ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...**

**ԼՍԻՄԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

# ՈՒԽՏԻՆ ՏԱՊԱՆԱԿԸ

## ԿԻՐԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱՐԽԱՆՆԵՐԻ ԱՆՎՈՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՊՐՈՒԹԻՒՆԸ



Կէտուէլքեան ընտանիք, Ատանա

### ԿԻՐԻԿԻՈՅ ԱՂԷՏԸ

Սահմանադրութեան հռչակման «ուրախութիւններուն միջոց»ին, Սահակ Կթղ. Խաչատրեան կը գտնուէր Ատանա, ուր հիւպատոս մը իրեն ըսած էր. «Ես շատ լաւ չեմ տեսներ այս փոփոխութիւնը, եւ կը վախնամ՝ թէ օր մը արիւնոտ տեսարաններու ականատես ըլլանք»<sup>492</sup>:

Մինչեւ Աղէտը, 8-9 ամիսներու ընթացքին՝ Ատանայի եւ շրջակայքին մէջ արձանագրուած են բազմաթիւ դէպքեր:

Յակոբ Յ. Թերզեան անոնցմէ 20 «կարեւոր»ները յիշած է. սպառնական տարածայնութիւններ, հակաքրիստոնեայ եւ մանաւանդ հակահայ ցոյցեր, շէրիաթի պաշտպանութեան հրապարակային յայտարարութիւններ եւ թուրքիներ, դաւադիր արարքներ, ապստամբութեան եւ յարձակման սուտ լուրեր, սպանութիւններ եւ այլ չարագործութիւններ<sup>493</sup>:

Կուսակալ ձեկվատ պէյ, որուն աչքերուն առջեւ շատցած էին մոլեգին եւ վայրագ արարքները, իբրև «հանդիսատես» էր դիտած: 'Իսլամի դրագիրը Ատանայի Կուսակալ Պարի փաշան իր պաշտօնէն հեռացնելով է, որ տեղը նշանակած էր «Երլուրդի պալատին էնթրիկներով եւ հայաջինջ ու երկրակործան քաղաքականութիւններով խմորուած» այս պէյը»<sup>494</sup>:

Նման Կուսակալի մը նշանակումին աւելցած էր նահանգին հրամանատարութեան յանձնումը արքունի «գոթիսային» ծրագիրներուն գործիք» եւ Մարաշի 1895-96-ի ջարդը կազմակերպած Յէրիք Մուսթաֆա Ռէմզի փաշայի. ոստիկանական զօրքերուն հրամանատարութիւնն ալ յանձնուած էր Ահմէտ պէյի, որ «անուս, մոլեռանդ եւ բռնապետութեան բոլոր գարշութիւններով» ապականած մէկն էր»<sup>495</sup>:

Այն օրերուն, Եպարքոս Հիւսէյին Հիւմի փաշայէ նաեւ Ատանայի Կուսակալութեան ղրկուած հեռագիր մը՝ հրամայած էր Միւլթիւն եւ Յաւաթիմուլթիւն Կուսակցութեան զատ որեւէ այլ կուսակցութիւն չճանչնալ<sup>496</sup>:

Հրամանին հասցէն, առաջնահերթաբար հայ կուսակցութիւնները չէին, այլ թուրք ընդդիմադիր կուսակցութիւնները: Սակայն «նենգաժէտ» թուրքը պիտի ընտրէր հայ կուսակցութիւնները<sup>497</sup>, որոնք ժողովուրդին հետ, կուսակցով իրենց շուրջ նիւթուած մեքենայութիւնները, հետզհետէ քաշուած էին

նոյնիսկ ցոյցերէ: Անոնց մէջ՝ բաղդատաբար այլ նահանգներուն հայութեան եւ կուսակցական մարմիններուն՝ արդէն ժլատ գտնուած էին, ազատութեան հռչակումի առաջին օրերէն<sup>498</sup>:

Հիւմի փաշա թուրքերու կողմէ հայ կուսակցութիւններուն ընկալումը՝ Համիտեան շրջանի ընկալումին դարձուցած էր իր հեռագրով. «Թերեւս անգիտակցաբար»<sup>499</sup>:

Թերզեանէ յիշուած 20 «կարեւոր» դէպքերէն առաջինը՝ Ջարդի սպառնալիքներուն մոտքն էր մինչեւ նահանգի հայութեան անքուն գիշերները: Սպառնալիքները «Րամազանի Պայրամին օր»ը ցոյց կու տային իբրև սկիզբ<sup>500</sup>:

Երբ սարսափի ճգնաժամներուն մէջ, քաղաքականօրէն հրապարակէ քաշուած էին թէ՛ կոմիտէներ եւ թէ՛ ժողովուրդ, Հայ եկեղեցին «հակառակ իրողութիւններուն, եւ հակառակ նոյնիսկ կասկածներուն» կը յորդորէր ցոյց տալով «այն միջոցները, որոնցմով կարելի պիտի ըլլար նպաստաւորուել Սահմանադրութեանէն»<sup>501</sup>. այսինքն՝ տեղւոյն թրքացեղ ժողովուրդներուն հանդէպ բարեացակամ տրամադրութիւններ ունենալ. ականջ չդնել չարամիտ տարածայնութիւններուն. արթուն մնալ թէ՛ համայնքային եւ թէ՛ երկրին շահերուն պաշտպանութեան մէջ. անհատական կամ հաւաքական իրաւագրկումներու պարագային՝ նախ առանց չափազանցութիւններու եւ սուտերու դիմել տեղական իշխանութեան, եւ ետքը՝ ապարդիւն մնալու պարագային՝ դիմել Առաջնորդարան, որ «միշտ պատրաստ եղած է, ինչպէս բռնապետութեան, նոյնպէս ազատութեան օրերուն մէջ» իր ժողովուրդին ցաւերով հետաքրքրուելու եւ պաշտպանել անոր իրաւունքները. ինքնակրթութեան աշխատիլ, որովհետեւ հայութիւնն ալ ունի տգէտներ. ուսման հետամուտ ըլլալ՝ որովհետեւ «ապագան արժանիք ունեցողինն է»<sup>502</sup>:

Եւ յանկարծ Կ. Պոլսոյ մէջ՝ «յետագիմական շարժում»ը կամ «31 Մարտի Պատահար»ը, որուն առաջնակարգ լուրերը շէրիաթի վերահաստատումն էր: Այս դէպքը 11 օրեր պիտի տեւէր եւ յանգէր Սուլթան Համիտի գահընկեցութեան<sup>503</sup>: Նոյն ատեն պիտի սկսէր եւ լրանար Կիւրիկիոյ աղէտին առաջին հանգրուանը:

Յետադիմական շարժումը մեծ դեր խաղաց, սրելով ախորժակները, եւ Կիւրիկիոյ աղէտին առաւել ծաւալման նպաստեց<sup>504</sup>:

Կիւրիկիոյ մէջ ալ շէրիաթի վերահաստատման լուրերն էր, որ ամենաբարձր ճայնուեցաւ եւ սպառնաց, ինչպէս յիշուեցաւ, Ջարդի «Րամազանի Պայրամին օր»էն: Մայրաքաղաքի իսլամական քարոզչութեան ամենէն բացայայտ արարքն ալ սա եղաւ:

«Առտու մ'ալ, - քրած է Թերզեան, - խոշոր գիրերով լայնածաւալ հասցիին յայտարարագիր մը փակցուած գտնուեցաւ Ատանայի ամենէն բանուկ հրապարակը, բարձրացող ժամացոյցի աշտարակին վրայ, ուր գրուած էր թէ՛ Հնդկաստանի, Եգիպտոսի եւ ուրիշ ամէն կողմերու վեց հարիւր միլիոն իսլամները միացած՝ Անգլիական կառավարութեան դիմած են, պահանջելով որ Իսլամական շէրիաթը պահպանուի, հակառակ պարագային՝ իրենց արեան վերջին կաթիլը թափելու պատրաստ են շէրիաթին պաշտպանութեան համար»: Վաւերագրողը աւելցուցած է, թէ այս յայտարարագրէն հազարաւոր օրինակներ ընդօրինակուելով, ինչպէս բերանէ բերան խօսուելով տարածուած են, եւ ոչ-իսլամներու, մանաւանդ հայերուն նկատմամբ սոսկալի հակառակութիւն մը բռնկեցուցած, որովհետեւ, ըստ մոլեգնածներուն, անոնք՝ «Սահմանադրութեան պահպանումով շէրիաթը վերցնել կ'ուզէին»<sup>505</sup>:

### ԳԱՌՆԻԿ ԱԼ. Ք. Գ.

Ա.Ղ.ԲԻՒՐՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

492.- ՄԱՊ, է 35:  
493.- Տե՛ս Յակոբ Յ. Թերզեան, Կիւրիկիոյ Աղէտը, Կ. Պոլիս, 1912, էջ 9-23:

494.- ՄԱՊ, է 25:  
495.- Անդ:  
496.- Ն, է 34:  
497.- Ն, է 35:  
498.- Անդ:  
499.- Անդ:  
500.- ԹԿԱ, է 10:  
501.- ՄԱՊ, է 26:  
502.- Տե՛ս ն, էջ 27-29:  
503.- Ըստ առաքիլութեան մը (E. J. Zürcher իր 'The Ides of April', համացանց), Իթիհատի կողմէ տարածուած ամբաստանութիւն մըն էր, եւ ապստամբութեան ետին կը կենային Սուլթան Համիտն ու Իսլամ ընդդիմութիւնը: Առարկողը հակամէտ է խորհելու, թէ եղածը ընդհանուր դժգոհութեան մը պոռթկումն էր, թէ տարբեր խմբաւորումներ՝ տարբեր խնդիրներով դժգոհ

էին Սահմանադրական վարչակարգէն: Ան ապստամբութեան շարք մը ազգակներ թուած է. 1) Դժգոհ էին Համիտեան կառոյցին նախկին անդամները, ներառեալ՝ հազարաւոր լրտեսներ, որոնք գրկուած էին իրենց նիւթական շահերէն եւ դիրքերէն: Նաեւ՝ հազարաւոր գործազուրկ պետական պաշտօնեաներ, որոնք կառավարական գրասենեակները աւելորդ տեղ բեռնաւորած էին: 2) Դժգոհ էին բանակին մէջ: Բանակը ճեղքուած էր ընդմէջ մէքթէպը սպաներուն՝ որոնք ուսանած էին զինուորական դպրոցներու եւ ակադեմիային մէջ, եւ այլապէս սպաներուն՝ որոնք զինուորական կարգերուն մէջ ժամանակի ընթացքին բարձրացած էին, եւ տեղաւորուած Առաջին Բանակէն ներս, որ Կ. Պոլսոյ մէջ եւ շուրջը կը գտնուէր: 1908-ին, մէքթէպըները այլապէս չէին շատերուն տեղերը գրաւած էին՝ զանոնք պաշտօնագրկելով կամ աստիճանագրկելով, եւ կասեցնելով պաշտօնի բարձրացման դրութիւնը: Եւ ի շարս այլ փոփոխութիւններու՝ արգիլած էին փորձերու ժամանակ կրօնական լուսացումներու եւ աղօթքի դադարները: 3) Դժգոհ էին իսլամական Օրէնքի ժողովուրդին մեկնաբանները՝ ուլամաները. անոնք մթնոլորտին փոփոխութեան սպառնացուած կը զգային: 4) Թուրք ընդդիմութեան անհամաձայնութիւնը. Իթիհատին կը հակադրուէր Ահրար Կուսակցութիւնը, որ կը քննադատէր անոր քաղաքականութիւնը իբր անպատասխանատու, նաեւ կը քննադատէր անոր ձգտումը՝ իր ձեռքին մէջ կեդրոնացնելու իշխանութիւնը: Եւ 5) Իթիհատը հասարակաց կարծիքին հաղորդ չէր, այլ տարուած էր ժողովուրդը աստիճանաբար դաստիարակելու դրապաշտ, ազատական եւ ազգայնական գաղափարներով (էջ 71-72): Zürcher կ'ընդունի, թէ իսլամական արմատականութիւնը «մեծ դեր» ունեցաւ ապստամբութեան մէջ, սակայն միայն այդքան, էջ 73:

Այս բոլորը եւ այլք կրնային ազգակներ ըլլալ, բայց եթէ յիշեալներն ու չյիշեալները չձեռնածուէին քաղաքականութեամբ մը եւ զանգուածները շարժող ոգիով մը, ապա տեղի չէր ունենար 31 Մարտի Պատահարը: Քաղաքականութեան վերին հեղինակութիւնը սուլթանն էր, զանգուածները շարժող ոգին ալ մոլեռանդ իսլամութիւնը:  
504.- ԹԿԱ, է 23:  
505.- Ն, էջ 10-11:

### Յակոբ Աշրգեանի յիշատակին արտասանուած դամբանական

Սիրելի՛ սգակիրներ,

Զէի ուզեր այս դժուարին պարտականութիւնը ստանձնել ու այս պահու ծանր հոգեվիճակներով արտայայտուիլ՝ հետեւեալ հանգամանքներուն պատճառաւ:

